


Հրատարակու քիւն Քազուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան

Ա Ր Ա Մ Ա Յ Ի Ա

№ 1.

(Араманъ)

Հ Ո Ղ Ի 

 Մ Ա Ր Դ Ը

(Власть земли)



ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓՕԻՍՏՍՈՎՈՆՆԵՐԻ

Б А К У

Типография „Трудъ“ С. Г. Берладира и К-о.  
1915.

91.99

Վ-83



Handwritten text in a cursive script, likely Arabic or Persian, is visible at the top of the right page. The text is partially obscured by a large, faint, circular stamp or seal. Below the stamp, there are several lines of text, including what appears to be a date or a specific reference number. The right page also shows signs of age and wear, with some discoloration and faint markings.

21.02.2013

Հասարակուրիւն Բագուի Հայոց Մտրդասիրական ԸՅԿերութիւն

JAN 2009

Ս. Բ. Ս. Ս. Յ. Ի. Ս.

№ 9 NOV 2010

Կ. Փրայմրա Կոմիտեի  
Կարգադր

891.99

Կ-83

Կար.

Հ Ա Ղ Ի

1006


Մ Ա Ր Դ Ը



ՅՕԴՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆԵՐԻ

*(Handwritten scribble)*

БАКУ



«Трудь» С. Г. Берладира и К-о.  
1915.

808-89



## Հ Ո Ղ Ի Մ Ա Ր Դ Ը

I

Դառեսերը ծածկուած էին առաւօտեան քանձր մեզով՝ մի քանի քայլի վրայ բփերն ու ծառերը դժուարութեամբ էին որոշուում. բայց լոյսը նոր բացուած էր եւ նրա ներկայութիւնն զգացուում էր մեզի միջից:

Գիշերը կանաչ խոտերի վրայ ցօղր նստել էր մանրիկ կարիւններով, եւ դեռ այժմ էլ աննկատելի կերպով մեզի քանձրութիւնից իջնում էր մի դուրեկան խոնաւութիւն ու նոր արքնացած դառեսերը ցողազարդում, այնպէս որ, երբ թռուսամբն հասաւ Մեծ-Տափի վերեւի ծայրն ու սերմի բերք ցած դրեց, տեսնուեց արդէն բացացել էին ու փոկերը կակղել:

Բայց նա գոն էր ու սիրտը՝ խաղաղ. նախընթաց անձրեւներից հողը բոլորովին փխրուն էր դարձել, իսկ մեզ օրերը սերմ զցելն ու վար անելը շատ նպաստաւոր էր եզների համար:

Մեծ-Տափի վերեւի ծայրին, որեւէ իջեցրել էին սերմը, մի հնամեայ ընկուզենի կար, որ, քեռ տեսնուեց դեղնած էին, դեռ սաղարքարափ չէր եղել ու մի որոշ տարածութիւն ազատ էր պահել անձրեւներից: Թռուսամբն այդ չոր տեղը կրակ արեց, խուրչիկից հանեց մի կտոր փափուկ հաց ու մօտեցաւ տանուներէ տեսնուեց քոտանը:

— Հ՛ր, բալա-ջան, մտնում ես,—ասաց նա խանդաղասանով, քոտան ձեռները շփելով.—եկ, մասաղ. կրակի մօտ նստի, համ տալիս, համ էլ հացդ կեր, ես սերմը զցեմ... բայց աչիդ եզներին պահիր, շատ չհեռանան:

Այդ ասելով, թումաս-ամին մի երկու քայլ դենը գնաց, գեղից վերջրեց հողի մի կոշ ու մանրեց մասներով. հողը փխրուն էր ու խոնաւ. խոփը հեծուրեամբ պէտք է իւր գործը տեսներ:

Ապա մօտեցաւ ցորենի հակին, զոգնոցը՝ երկու ծայրերից բռնած՝ լցրեց սերմով ու անցաւ դաշտի ներքեւի կողմը: Աջ ձեռնով զոգնոցից մի բուռը սերմ վերցնելով, թումաս-ամին երեսը դարձրեց դեպի արեւելք ու կանգնեց: Այդ ռոպէին նրա դիմքը վեճ էր ու հանդիսաւոր. այն գործը, սերմ գցելու խորհուրդը, որ պէտք է կատարէր, այնքան մեծ էր ու վսեմ նրա համար, որ մէկ էլ այդպիսի երկիւղածութիւն թումաս-ամին Մեծ-Պատի վերջին շաբաթ օրն էր զգում, երբ երկար ծումապահութիւնից յետոյ քահանայի առաջ չոխած՝ մեղեքի բողոքութիւնն էր սպասում:

Նա լուռ էր. օրումները չէին շարժում. բայց այն կօնական խորհրդաւորութիւնը, որ դրոշմուած էր նրա դեմքին, յուսով լի աչքերը, որ հեզութեամբ յառած էին դեպի արեւելք, ցոյց էին տալիս, որ նա աղօթում է հոգով ու օրով, եւ այդ աղօթքը հասարակներից չէ:

Երբ լսին աղօթքը վերջացրեց, թումաս-ամին մի քերտացնող, օրհարուղիս հոգոց ֆաշեց ու՝

— Եւ՛ Տէր-Ասուած, Դո՛ւ երէխորցս հացը հասցնես — ասելով, սերմի առաջին բուռը շող տուեց:

Այդ ռոպէին նրա սիրտը լի էր բարութեամբ ու անհուն սիրով. հողը, որի վրայ սերմ էր ցանում, սերմը, որ բռան մէջ խելուած էր մեղմով, խոնաւ մեզը, որ անբափանցելի քանձուրեամբ փռուել էր դաշտերի երեսին, այդ բոլորը սիրելի էին նրան, եւ կարծես նրանք առանձին-առանձին բաներ չէին, այլ ինքն էլ նրանց հետ միացած՝ կազմում էին մի անբաժանելի միութիւն, համակուած միեւնոյն զգացումներով, միեւնոյն ապրումներով:

Գոգնոցի սերմը վերջացաւ: Թումաս-ամին դարձեալ մօտեցաւ սերմի հակին, զոգնոցը լցրեց ու շարունակեց սերմելը: Բազմաթիւ անգամ այդ նոյնը կրկնելով, յետ նայեց,

զտաւ, որ ցանածը հերիք է մի օրովարի համար, վերջին բուռն էլ շող տալով, գնաց դեպի ընկուզենին:

— Դէ, բալա-ջան, Գասպար, ասաց նա, բոռանը դառնալով.— վեր կաց, մասաղ, եզները բեր լծենք, որ Մեծ-Տափին պահ տուածը ծածկենք:

Գասպարը, որի ոտները կրակի կողմին երկար նստելուց ընդամացել էին, մի քիչ դժուարութեամբ բարձրացաւ տեղից, սկզբում կամաց-կամաց, բայց քիչ յետոյ ոտները բացուած՝ վազելագ հասաւ կանաչկոտում արածող եզներին, ու ֆեշց այնտեղ, որտեղ պապը սերմ էր գցել:

Թումաս-ամին գուրգուրանով մօտեցաւ եզներին, ֆաղքը խօսեւ ասելով՝ մեկի գլուխն ու աչքերը սղալեց, միսի մէջքը շփեց, երրորդի պագերից բռնեց հանաճով, չորրորդին սիրոյ խրատներ կարդաց, որ չարանհիութիւն չանէ, ընկերոջը չբոսբոսէ, եւ այդ օրուայ անելիքի ու իր յոյսերի մասին պատելով եզներին, լուծը բարձրացրեց ու դրեց առաջին ջուխի շլնիկին:

Լաւ խնամուած, առաւօտուայ ցօղոս խոտերում արածած կուշ եզները հանդարտ կանգնել, որոնում էին ու սպասում: Թումաս-ամին սամիները պինդ կապով կապեց, փոկն անց կացրեց առաջին լծի մէջ տեղից, միւս ջուխսն էլ լծեց, կղանը նայեց, մասանը պնդացրեց եւ կոտակի սեպի դրութիւնն էլ ստուգելով, անցաւ խոփի կողմը:

Գասպարը հմուտ հօտաղի նարակութեամբ, իր արժեքն իմացող մեծ երեխայի հպարտութեամբ բռաւ, նստեց երկրորդ գոյգ եզան լծին, ոտներով գրկեց լծից լուծ անցնող կաշուէ հաստ փոկը՝ աւելի հաստասուն դիրք բռնելու համար, ու նիպոսը ձեռնն առաւ:

Թումաս-ամին բռնեց մանր, խոփը բռնացրեց հողին, մի անգամ էլ երեսը դեպի արեւելք դարձրեց, խաչ հանեց երեսին ու կանչեց:

— Գասպար, ձե՛ն հանիր... դէ՛, Խումար-ջան, Սարօ՛, ձե՛ր ոտներին, ձե՛ր դուրսին մասաղ. հօ՛, օ-հօ՛օ՛...:

Երկար տարիներ վար ու ցանկութեամբ փորձուած, եփուած

եզները խրախուսական ձայնը լսելով, իսկոյն հասկացան իրանց անելիքը. — յետեւի օտներնին մի քիչ պիմնար տալով, վզերնին ձգեցին, ոյժ տուին, եւ խօսիք, խրուելով փխրուն սեւահողի մեջ, սկսեց ուղղաձիգ ակօսներ փորել Մեծ-Տափի կրծքին:

Քումաս-ամին վարսուն ու հինգ տարեկան մարդ էր, բայց չէր կարելի ծերունի ասել, որովհետեւ այնպէս լաւ պահուել էր, որ դեմքին դեռ կայտառութիւն արտայայտող գծեր կային, իսկ մազերն այնքան էլ չէին ներմակել: Քիկնեղ, հաս մեջով, քեւերը մազվզոտ ու ջրոտ, ձեռները լայն, նախնուած մարքով, մասները հաս-հաս ու ծածկուած կոճերով: Տասնուամեկ տարեկանից սկսած նա հաղորդուել էր գիւղական աշխատանքներին, իսկ քսան տարեկանից՝ նա արդէն ամուսնացած, գիւղամեջ դուրս եկած, իրաւտէր գիւղացի էր ու փորձուած երկրագործ:

Յիսուն տարի առաջ էր, որ նա արտի քրքոցով, մի ներքին, իրան միայն յայտնի գաղտնի հայտնութեամբ, իր սասանեկան քերուծ, բայց նկուն մասներով առաջին անգամ, հօր ներկայութեամբ բռնեց մանր ու խօսիին ուղղութիւն տալով՝ քիւր, կանչեց հօտաղին: Եւ այն օրուանից յիսուն տարի շարունակ նա դաժնուած էր, իսկ հողը, խօսին ու եզները՝ նրա անբաժանելի մի մասը:

Նա հողի մարդ էր դարձել եւ չէր կարող ապրել առանց հողի: Մեծ-Տափը նրա շունչն էր, եզները՝ նրա միտքն ու հոգին: Նա ամենամանրամասն կերպով գիտէր, քե Մեծ-Տափում աշունն ի՛նչ տեսակ խոտեր են բսնում, գարնանն ի՛նչ տեսակ: Գիտէր, քե ցորենը որտեղ ի՛նչ բարձրութեան էր լինում, եւ քե պուտն ու շախկամը աւելի շատ ո՛ր կողմն են բսնում: Ճանաչում էր մինչեւ անգամ շատերին ա՛յն բույսերից, որ իւր սիրած-պաշտած բնկուղեւուն նդներին գալիս, հանգստանում էին:

Եւ Քումաս-ամին երբեմն մտածում էր, քե ի՞նչ կը լինէր իր դրութիւնը, եթէ Մեծ-Տափը ձեռքից ընկներ. մտածում էր ու համ վախենում, որ գլուխն այդպիսի մտքեր են

գալիս, համ ժպտում. իսկ ժպտում էր, որովհետեւ նրան բռնում էր, որ ինքն անպատեալ կը մեռներ ցաւից, բայց խօ Մեծ-Տափն էլ իր հետ կը մեռներ: Ինչպէ՞ս կարելի է, որ կեանքի մի մասը մեռնի, միւս մասը կենդանի մնայ. — իսկ Մեծ-Տափն ու Քումաս-ամին մի ամբողջութիւն, մի՛ կեանք էին կազմում...

Ակօսները կանոնաւոր շարքերով շարունակ էին միմեանց կողմով եւ Մեծ-Տափի ներքեւի մայր ծածկում էր խօսիք բերնից շուռ եկած խոնաւ, սեւ հողով, որ գիրկն էր առնում նոր ցանած սերմերը, նրանց այնտեղ պահպանելու գալիք ցրտերից, մինչեւ գարուն:

Օրը բաւականին անցել էր: Մեզը սոկ էր եկել դաժների երեսից եւ աւելի քան արագած՝ կանգնել հողից մի պարտաճախ բարձր: Եւ այդ դուրսեամբ, ամպերն այժմ կարծես աշխատում էին մի կերպ քերտանալ իրանց մեջ պարունակած ծանրութիւնից, եւ անձեւը մանրիկ, բայց խիտ շիբերով շաղում էր ներքեւ:

Գասպարը լծի վրայ նստած, հօտաղի երգեր երգելով, փաշալերում էր եզներին. գովում էր նրանց գոյնը, ոյժը, նակասքը, խոստանում հանգստութիւն, առատ խոտ: Երգում էր, բայց ամբողջապէս ջրողող էր ելել, եւ մեկ-մեկ սարսուռ էր ու ձայնը փոխում, երբ բրդոտ փափախի մազերի վրայ նստած կաթիլներից մի փակար, միանալով ու էլ ծանրութիւնից տեղը մնալ չկարողանալով, սահում էին ու նրա բաց պարտաճախներ գլորում դեպի կուրծքն ու քիկունքը:

Իսկ Քումաս-ամին երանութեան մեջ էր. նրա նոգը չէր, քե մեջքն ու ուտերը բոլորովին քրջուած են. շաղը, խոնաւութիւնը նրա համար մի երկնասուր գանձ, մի սխալելի բարիք էր, որ բնութիւնն էր ուղարկել՝ աշխատաւորի ջանքն օրհնելու:

Եզներից մեկը, խումարը՝ չոճից. խօսիք դէմ էր աւել հողի տակ քաղնուած մի չոր արմատի ու մեխուել տեղը: Ցրտից նեղացած էր քե ինչ, Գասպարը նիպոտը մեկնեց, մի սպասանական ձայն հանեց ու զարկեց խումարի մեջքի երկարութեամբ:

Յանկարծ թումաս-ամին ծառս եղաւ նիպոսի շումիոցից, դիացաւ ու կես զարմացած, կես բնդարմացած՝ մնաց դեպի լուծը նայելիս. մի քանի վայրկեան յետոյ միայն ուշաբերուեց ու հասկացաւ, որ խումարը չոխել է, եւ այն Գասպարն էր, որ զարկեց եզանը:

— Վա՛յ քու ձեռքդ չորանայ. եզանը խփեցի՞ր... — կանչեց թումաս-ամին կսկծի ու դառնութեան շեշտով, ապա սխալն ուղղելու համար մօտ վազեց, տեղից արդեն վեր կացած խումարի մեջքը սղալեց, գորովալից խօսքեր ուղղեց նրան եւ դունչը բռնելով՝ պաշեց նակասից ու աչքերից:

Երբ ուզում էր մանին անցնել, մտածեց, որ Սարօն, Ծաղիկը, Աբուաբը կարող են նեղանալ, նրանց էլ շոյեց, փաղափեց, «մասաղ-ջան» ասաց, յիշեց, որ Գասպարին այսպիսի հանդիսաւոր օրը ծանր խօսքեր ասաց, զղջաց եւ — բալա-ջան, քեզ մասաղ, բա եզանը կը խփե՞ն — ասելով, մօտեցաւ, հաստատուն ձեռներով նայեց մանը, խոփը յետ քուշեց արմատից եւ միւս կողմն անցկացնելով՝ շարունակեց աշխատանքը:

Կեսօրից յետոյ, երբ մի ժամաչափ հանգստութիւն առնելով Մեծ-Տափի աշխատանքները նորից գործի էին կանգնել, ամպերը կամաց-կամաց վեր-վեր խաղացին, ապա նրանց մեջ տեղը բարակեց-բարակեց, ու մեկէ՛ն արանքը պատռուելով՝ վերեւում երկնքի մի կտորը երեւաց մաքուր, կապոյտ... Իսկ այդ պատռուածի միջից արեւը իւր ջերմ շողերն անուշ ժպտի նման փռեց լայնարձակ, հարք դաշտավայրի մի ծայրով:

Քիչ յետոյ ամպերը երկու խոշոր մասերի բաժանուելով, միմեանցից անելի հեռացան, նրանցից մեկը նստեց հեռաւոր լեռան գլխին, իսկ միւսը, նորից կտրուելով մանրիկ փոլաների, աննետացաւ հորիզոնում:

Այժմ գեղածիծաղ, սիգապանձ արեգակը իւր ամբողջ գեղեցկութեամբ փայլում էր երկնակամարում եւ դաշտը ողորդուել էր նրա կենսաստ ջերմութեամբ: Թումաս-ամին քջուած չուխայից, եզների մեջքից, Գասպարի բրդոտ փափախից, դաշտի երեսից մի բարակ, մեղմ գոլորժի սկսեց բարձրանալ դեպի

վեր, օդը պարարելով աւանաշին մի առանձնայատուկ բուռնութեամբ:

— «Փառք ի պարծումս Աստուծո՛ւ»... — մըմնջաց թումաս-ամին եկեղեցում շարունակ լսած այդ մի քանի բառերը, «բարձունս» — ի փոխարէն «պարծումս» ասելով: Միտքը չէր հասկանում. բայց քանի որ եկեղեցումն էր արտասանում եւ մեջը «փառք» էլ կար, «Աստուած» էլ, ուրեմն, աղօթք էր: Եւ թումաս-ամին արժի մի առանձին բառականութեամբ մի անգամ եւս այդ աղօթքը կրկնելով, կանչեց. — դէ, Գասպար, երկու ակօս է մնացել. եղ էլ անցնենք, ու էսօրուայ գործը քոյ Աստուած օրհնէ...:

Ապա իւր լայն ու նախնուած փիերն առնելով մանը, ննչեց եւ պսպղուն խոփը նորից քաղաւեց ակօսի ծայրում:

## II

Մեծ-Տափը համարեա կպած էր գիւղին. նրանց միջի տարածութիւնը մի քանի բոլորում կարելի էր անցնել. երեւի այդ էր պատճառը, որ, քանի արեւը քեւում էր դեպի լեռներն ու գործը մօտեցնում վախճանին, Գասպարը նոյնքան էլ շուտ-շուտ էր երեսը շուտ սալիս ու դեպի գիւղը նայում: Նկատելի էր, որ տունը փաղցրացել է՝ եւ Գասպարն ուզում է, որ օրը շուտ անցնի:

Արեւն ընդ առաջ գնալով յոգնած հօտալի փոքրիկ ցանկութեանը, սկսեց կամաց-կամաց վեր հաշուել դաշտերից, բարձրացաւ, բնկուզեցնու նկներից սահեց, հասաւ բլուրներին, ապա Սիպակ-Սարի կատարին մի վայրկեան եւս քրքրալով՝ անցաւ լեռան յետեր:

Այդ բոլորին էլ թումաս-ամին օրավարի վերջին ակօսն անցնելով, կոացրած մեջքը դիացրեց ու ժպտուն աչքերով քունանը նայեց: Գասպարն իսկոյն հասկացաւ պապի միտքը. ուրախ-ուրախ ցած քուտ լծից ու կանգնեց եզների առաջ:

Թումաս-ամին սիրով լի արձով մօտեցաւ իր գործակիցներին, նորից շոյեց նրանց, բաց արեց սամիներն ու լուծն արձակեց:

— Չեր դէրաքի՛ն մասաղ Թումաս-ամին.—ասաց նա, դառնալով եզներին, համոզուած լինելով, որ ինքն նրանց համար ոչ այլ ոք է, երբ ոչ «Թումաս-ամին»,— մի տեսք մասնուն ինչպէ՛ս ենք ուրախացել է՛.— Եւ ձեռքով ցոյց տուեց այդ օրուայ շուռ տուած հողը.— դէ, Գասպար, եզները կամաց կամաց ֆէր տուն, ես էլ գալիս եմ:

Իրիկնամսի կիսադօս լոյսի մեջ գիւղն այժմ մի մթին զանգուածի էր նմանում, եւ այժմ Մեծ-Տափից՝ միայն նոր վառած օջախների ու բոնիւրների ձուխն էր երեւում, որի կապտամոխրագոյն բարակ սիւները բարձրանում էին գիւղի բոլոր սներից: Այնտեղ էլ աշխատանք կար. հանդուրներէի հացն էր պատրաստում:

Գասպարը փորձառու աչքով իրանց սան ուղղութիւնը գտաւ, եւ մի մեծ ձուխ բնօրէնով, իրան հաւատացրեց, որ այդ ձուխը հենց իրանց օջախինն է, եւ իր մեջ մի ջերմ կարօտութիւն զգալով դէպի այդ ձուխը, առանձին եռանդով շփուցնելով, եզները ֆեց դէպի տուն:

Թումաս-ամին լծերն ու փոկը չար աչքից հեռու պահելու համար ծածկեց ափսոսում եւ մի փոքրիկ պտոյտ գործեց այդ օրուայ ցանած—հերկածի շուրջը: Անունն օրավար էր, բայց մեկուկէս օրուայ գործ էր կատարուել. եւ ինչքան կանոնաւոր էին ափսոսները. կարծես մի վարպետ յատկապէս զբաղուած էր եղել նրանով, որ ափսոսները խնամով վերցնէ ու համաչափութեամբ շարէ միմեանց կողքի: Իրիկուան բոլոր լոյսի սակ, հերկած հողն այժմ, Մեծ-Տափի ընդհանուր Ֆօնի մեջ աւելի՛ սեւ ու հասիկ-հասիկ էր երեւում: Թումաս-ամին, իր կատարած գործի վստահութիւնն իմացողի զգացմունքով կուացաւ, վերցրեց հերկած տեղից մի բուռը հող եւ, երեսին մօտեցնելով, երկար նայեց:

— Ես եմ բարաբեքին մասաղ, Մեծ-Տափ,—ասաց նա ժպտուն ու հոգեզմայլ դիմով.— Բու Ստեղծողին մասաղ... Բանի՞ տարի է, մեզ հաց էս սալիս որդոց-որդի... Բեզ լոզներեղ ենք. ես տարի էլ մեզ հաց տուր, եկող տարի հանգստանալու հերքը բոնը կը լինի.— այդպէս խօսելով, Թումաս-ամին ցանկացաւ

ձեռքին բռնած հողը դէն զցել, բայց մին էլ կանգ առաւ. շարեւ չէր կարելի. Մեծ-Տափը կը նեղանար... կուացաւ, ու հողը կամացուկ դրեց այնտեղ, որտեղից վերցրել էր:

Ափսոսներից դուրս գալով, նա ուղղուեց դէպի ընկուզեցնին, ցափաք վերցնելու, որ, յամենայն դէպս, սնից հետք բերել էր. պէտք կը գար. կարող էր մի որ եւ է բան կոտրել:

Երբ ծառի նիւղերի սանձանք մտաւ ու մի-երկու ֆայլ արեց, Թումաս-ամին կենտրոնացաւ իր մեջ ու կանգ առաւ. նա ոտի սակ մի կլոր իր գգաց: Առանց տեսնելու հասկացաւ, որ դա ընկուզ է, ընկուզեցնուց քափուած տերեւների սակ ծածկուած: Անխոստափելի գոն ժպիտը բերնին, նայեց իր «Փոնփոխիկին», յետոյ կուացաւ, վերցրեց ընկուզը, տարաւ ծառի սակ քաղցրեց ու ցափաք ձեռքն առնելով ուղղուեց դէպի տուն:

Գիւղում շատ քիչ է պատահում, որ սան անդամները միասին նաշի նստեն. որովհետեւ մեկն այգումն է աշխատում, միւսը դաշտում, երրորդը ջրաղաց է գնում, չորրորդը—մի այլ տեղ. ցերեկը բոլորը զբաղուած են լինում զանազան տեղերում. այդ պատճառով իսկական նաշն իրիկունն է լինում, երբ եղած-չեղածից մի որ եւ է կերակուր են պատրաստում, երբ բոլոր աշխատանքները տուն են հաւաքուում:

Այդ էր պատճառը, որ Թումաս-ամինց սան հարսները շարժուն դուրքեան մեջ, այս ու այն կողմ ընկած՝ պատրաստութիւն էին տեսնում, ամաններ դուրս բերում, բոնրասան կրակի վրայ դրած անագին կարսայի սակի կրակը քեծացնում: Նրանք շատուում էին, որովհետեւ Գասպարն արդէն հանդից տուն էր եկել, եւ Թումաս-ամին, որտեղից որ է, հիմա կ'երեւար:

Եւ իսկապէս, քիչ յետոյ Թումաս-ամին եկաւ, անցաւ գոմը, եզների առաջը նայեց, խոտի ֆանակն ու որակը ստուգեց, ապա սրանք մտնելով՝ նստեց շէմում դրած հասարակ, իր ձեռքով շինած եռոտանի նստարանին: Փոքր հարսը, բեւեռի կոնակները զրնգացնելով, երեսը ծածկած՝ մօտ վագեց, փութիկոս մասներով Թումաս-ամու տրեխատանները բաց արեց, ցեխոտ տրեխներն ու կիսաքաց գուլբաները ֆաշեց,

հանեց ոսկերից, շէտլ նոյն արագ շարժումներով մօտ բերեց գոլ ջրով լի փոփրիկ փափակն ու սկսեց ամուռ ոսկերը լուանալ. եւ նա այնպէս ժիր ու ւրսով լուաց, որ Թումաս-ամին ծիծաղեց:

— Շա՛ն աղջիկ, ոսկերս պոկեցիր.—ասաց նա.—բու ձնողդ օրհնուի. հերիք է, չուսերս բեր ու Գասպարին կանչիր:

Կրունկները դեպի ներս ծալած չուսերը ոսկերը գցելով՝ մտաւ տուն: Երկար, նեղ սենեակ էր, գիւղերում ընդունած մանր լուսամուտներով, որոնցից մեկի երկու ապակին շարդուած էր ու սեղը ձիւքած բուրդ կպցրած: Ցասակը հող էր. բայց պատերի սակ, ամբողջ երկարութեամբ՝ խսիր էր փռած երեք կողմից, վրայից էլ՝ երկար գորգեր:

Թումաս-ամին չուսերը ոսկերից հանելով, գնաց ու ծալապատիկ նստեց յասկապէս իր համար դրած փոփրիկ օրոցի վրայ: Թուռներից մեկը, փոփրիկ Սողոմոնը, որ դեռ չէր կնէլ, վազեվազ եկաւ ու պապի գիրկը գլորեց:

— Պա՛ն, հոբոքս կծեմ, հո՛բոքս.—ասաց Թումաս-ամին, բոռանը լաւ սագացնելով ձնկներին:

Մայրը, երեսը ծածկած, արագ-արագ հասաւ, երեխին յոգնած պապի գրկից դուրս փաշելու. երեխան նվազ դժգոհութեամբ ու կպաւ պապի կրծքին:

— Աղջի, կորի՛ր,—կանչեց Թումաս-ամին.—սա իմ բալէս ա. գնա՛՛ քու բալէդ գիր:

Հարսն ինքնագոհութեամբ ժպտաց ու հեռացաւ:

Հետզհետէ հաւաքուեցին սան անդամներն եւ ձեռք ու ոտներին լուանալով, ցեխից մաքրուելով, նստեցին սենեակի պատի սակ: Եկաւ եւ Գասպարը:

— Եկ ինձ մօտ, բալա-ջան... կսեղ, է՛սեղ.—ձայն տուեց Թումաս-ամին —իմ քեւս պահողը դու ես. արանք հե՛շ.—աւելացրեց նա պատկառանքով ժպտացող իր որդիներին ցոյց տալով, որոնցից մեծը փռատուն սարեկանից անց էր.— երեք բաւը մնաց արանց, պրծա՛ւ... Մեծ-Տափը լաց կը լինի:

Գասպարը հպարտ-հպարտ նայեց իրա հօրն ու հօրեղբօրը

եւ աչքը սկսեց դռանը, որտեղից կարսան պէտք է ներս բերէին:

Եւ մինչդեռ Թումաս-ամին իր որդիներից հարց ու փորձ կ'անէր օրուայ գործերի մասին, գիրկը մտած բոռը կնէց: Որդիներից մեկը, որի երեխան էր կնածը, վեր կացաւ տեղից, գրկեց երեխին, ու շեմքումը կանգնելով, առանց կնոջ անունը տալու, կանչեց:

— Աղջի, ես երեխան կնէլ է, տա՛ր:

Կինը մօտ վազեց, ամուսնու գրկից առաւ երեխան:

— Ազի, սոված եմ.—մտնաց մեծ բոռներից մեկը:

«Ամի», «ազի», հօրեղբօրն ու հօրեղբօր կնոջն են կանչում գիւղում: Իսկ Թումաս-ամին ու նրա պառուս կարային բոլորի համար, քե՛ որդիների, քե՛ հարսների եւ քե՛ գիւղացիների, նոյն իսկ գիւղի փահանայի համար «ամի» ու «ազի» էին. միայն Թումաս-ամին էր, որ իրա պառուսին Սարվազնեց աղջիկ էր կանչում, եւ ազին, որ Թումաս-ամու անունը երբեք չէր տալիս. ամօք էր.—«բու պապ», «բու ամի», «մեր ալեւորը», «նա», «ինքը»—ահա այն անունները, որ ազին յասկացրել էր Թումաս-ամուն:

Մի շրուս, նիհար կին էր ազին. հարսներին մի ցուրտ խօսք ասած չկար. բայց շարունակ սնային գործերի յետեւից ընկած, միշտ շտապելիս՝ փողք խօսքերն էլ շատ առատ չէին նրա բերնում: Հարսները բոլորը փաշուում էին նրանից ու անխօս էին, բացի մեծ հարսից, որ խօսում էր, սկեսրոջ բոյլ-տուրեամբ:

Այդ ազին էր, որ սենեակի դռնից ներս նայեց ու յետ դառնալով՝ կանչեց:

— Սուփրան գցե՛ք:

Իսկոյն նեղ ու երկար սփռոցը մեկնեցին շարունակ սղա-մարդկանց առաջով: Սփռոցը կապոյտ էր, կոպիտ նախերով եւ մեջերքը մի փանի տեղ սպիտակ տաւերով դրուած.—«Ցանուն Հօր եւ Որդու եւ Հոգու Սրբոյ».—յետոյ բերին փայտե աղամանները, աղի վրայ խաչ փաշած, մի փանի գլուխ տխ, մաքրած ու մեջ տեղից չորս կտոր արած:

Օրհիբուն աշխատած մարդիկ կոտորած ձեռներնին մեկ-  
նեցին դեպի հացը. նրանք մեծ ախորժակով սկսեցին ուտել.  
աղում բարախած սոխը հացի քիֆաների մեջ դրած՝ իսկոյն  
կույ էր զնում մի համադամ խորտիկի պէս:

Շուտով ներս բերին եւ կարսան, որ լիքն էր նման յօ-  
բիով, համեմած չոր համեմունքներով ու սափեղով: Գասպարը  
նսած սեղը մի անհանգիստ շարժում արեց:

Ազին նսեց կարսայի կողքին, փայտե շերտեր ձեռքն  
առաւ ու կաւե գաւաթներն առաջ փառեց: Պապից սկսելով,  
ահագին գաւաթները լեփ-լեցուն բաժանեցին բոլորին:

Լօբին բրնձով էր եփած. համով էր, եւ բարձրացող սափ  
գոլորտին՝ ախորժակ գրգռող:

Յակապետ բրդելու համար՝ փափուկ հացի հետ դրում  
էին ե՛ւ անցեալ օրերից մնացած հացի կտորներ. ուժեղ  
մասներով այդ բոլոր կտորները փերեցին լօբու մեջ, խառ-  
նեցին եւ փայտե գդալներով այնպիսի՝ ախորժակով գործի  
կպան, ինչպիսի քափով նրանք ցերեկն աշխատանքի էին կպել  
հանդերում:

Երբ լօբու կարսան դատարկուեց, պղնձե ամաններում մա-  
ծունը բաժանեցին: Բայց Գասպարն արդէն սկսել էր ննջել.  
Թումաս-ամին ձախ ձեռքով ննջող բռան գլուխը սղալեց,  
գուրգուրեց, — կեր, մատաղ, կե՛ր, — ասելով, նրան ուտացրեց,  
ինքն էլ կերաւ, ու ընթրիքը վերջացաւ: Ամենքը դիմեցին դեպի  
իրանց անկողինները. առաւօտը վաղ պէտք է վեր կենային:

Թումաս-ամին նոյնպէս բարձրացաւ սեղից, նրազը ձեռքն  
առաւ, մտաւ գոմը, նայեց տաւարներին, սիրալիք խօսքեր ա-  
սաց, եզների առաջ խոտ աւելացրեց, ու նոր միայն հանգստա-  
ցած, դարձաւ տուն, հանուեց, մտաւ անկողին, երեսին խաչ  
հանեց ու իսկոյն փուն մտաւ:

### III

Հետեւեալ օրը դեռ մութ էր, երբ Մեծ-Տափի գործաւոր-  
ները դուրս եկան գիւղից: Բայց երբ տեղ հասան, մութը կա-  
մաց-կամաց տեղի տուեց, ու բացուեց մի սփռնչելի առաւօտ:

Երկինքը քեւ դեռ չէր կապտել, բայց բոլորովին պարզ  
էր, եւ միայն մօտակայ բլուրներից մեկի ծայրը փաթարուած  
էր վաղորդեան մթնշաղի մի անձեռագործ շղարեով, եւ այն-  
տեղ բռնած փոփոխ մասուտը հեռուից նմանում էր երկնից  
կախուած մի բուրվառի, որ գիշերն անուշաբոյր կնդրուկ էր  
բուրվառել ու նրա մեղմիկ ծխի քափանցիկ ֆոդով իր չորս  
կողմը վարագուրել:

Թումաս օղը յագեցած էր գիշերը բարձրացած խոնաւու-  
քեամբ, տեղ-տեղ սեւին էին տալիս նոր հերկուած արտերը, եւ  
ընդարձակ դաշտավայրը շնչում էր մի կենարար, առողջ շնչով:

Թումաս-ամին տոնական տրամադրութեամբ էրք հասաւ  
ընկուզեմուն, որտեղ սերմը պէտք է ցած դներ, աղօտ կերպով  
լիւնեց, որ երեկ իրիկունն այդտեղ, ընկուզեմուն տակ մի բան  
պատահեց. իսկ քե ի՞նչ բան, — մտաբերել չկարողացաւ: Սերմն  
էլ ցած դրեց, ցափասն էլ տեղաւորեց, գոզնոցն էլ կապեց շա-  
րունակ մտածելով իրան զբաղեցնող խնդրի մասին, քե՛ ախ  
այն ի՞նչ էր, որ իրան պատահեց եւ որ այժմ միտք չի ընկնում:  
Եւ երբ այդ մտմունքներով արդէն սերմի ֆակի բերանն  
ուզում էր բանալ, մշտական յանախորդ կաշաղակներից մեկը  
բռաւ, եկաւ, նսեց ընկուզեմուն կատարին եւ սկսեց իր չա-  
րանի չրքչրոցները: Թումաս-ամին գլուխը բարձրացրեց  
«իր» կաշաղակին մի-երկու խօսք նուիրելու, նայեց, ու մի  
փակի դեղնած տերեւների ընկնելը տեսնելով, յանկարծ յիշեց  
այն, ինչի մասին մտածում էր:

— Գասպար, Գասպար, — կանչեց նա եզները դեպի  
կանաչկոտը քոտ բռնանը:

Գասպարը շէտ նայեց:

— Էստեղ էլ, բալա՛, էստեղ. — նորից կանչեց Թումաս-  
ամին, ու մինչդեռ Գասպարը վազեվազ յետ կը գար, ինքը  
մօտեցաւ ընկուզեմուն բնին, կռացաւ, ինչ-որ փրփրեց, եւ երբ  
բարձրացաւ, վեր փառած մասներում մի մեծ ընկոյզ ուներ  
բռնած. — մի տես «Փոնկոփիկը» քեզ ի՞նչ է փառել է՛... երեկ  
եմ գտել. — մի լայն ժպտով ասաց նա, ու ընկոյզը դրեց աչքե-  
րը լայն բաց արած բռնան ափին:

Գասպարը մի հազուագիւս ընծայ ստացածի նման նանկեց ընկոյզն, ուրախ-ուրախ ուսուսեց ու բուռ դէպի եզները: Թումաս-ամին մի-երկու վայրկեան հրնուանով բոռան յետեւից նայեց, եւ այս անգամ սերմին մօտենալով, բաց արեց գոգնոցը:

Գոգնոցը բաց արեց, լցրեց, եւ հասնելով ախօսներին, սկսեց օրավարը սերմել:

Մի ժամ յետոյ եզները լծուած՝ դարձեալ ախօսներ էին շարում Մեծ-Տափի երեսով: Թումաս-ամին նոյն հանդիսաւորութեամբ, ինչպէս երէկ, հոգով ու արտով հողի հետ ձուլուած՝ մեկ-մեկ Գասպարին եր ցուցմունքներ տալիս, իսկ Գասպարը հօտաղի երգերը զլած՝ բնական կլկլոցներով, եզներին եր ֆաշալեռում:

Մեծ-Տափի մի կողմն աւելի ու աւելի եր սեւանում շուռ տուած հողով, եւ Թումաս-ամու հոգին փառաւորում եր, երբ մեջ ընդ մեջ բուռցիկ հայեացք եր գցում խոփն անց կաջած տեղերին:

Կեսօրին մօտ, երբ ախօսն անցնելով, երեսներն հակառակ կողմը դարձրին նոր ախօս անցնելու, Գասպարը լծի վրայ նստած՝ հարեւան տափում մի սեւ կէտ նկատեց հերկած հողի վրայ, որ դէպի իրանց եր շարժուում:

Սեւ կէտը քիչ յետոյ մեծացաւ ու մարդու կերպարանք առաւ:

— Ամի, դերը դէպի մեզ է գալիս. —ասաց Գասպարը, մօտեցողին երկար եւ ուշադրութեամբ դիտելուց յետոյ:

Իսկապէս՝ եկողը գիւղի ֆահանան եր, Տեր-Սիմօնը:

— Բարի-ողջոյն, Թումաս-ամի. — կանչեց նա ծիծաղկուն դեմքով. — կուներիդ դուա՛ր:

— Օրհնեա՛ տեր, ա՛ դեր. — պատասխանեց Թումաս-ամին. — ծառայ եմք... իմ կուներիս դուար, բայց եզներս ու Մեծ-Տափս է՛լ մի մտացիր:

— Աստուած ոյժ տայ եզներիդ, Մեծ-Տափիդ ու հօտաղիդ... Աստուած ցանածիդ մեկը հազար անէ. — օրհնեց ֆահանան:

— Ծառայ եմք, ա՛ դեր. Աստուած օրհնանդ լսի, մեր հացը հասցնի... Բա վարդի ինչո՞ւ ես բողել:

— Մասաղկներիցս մեկը կոտրեց, ամի. լուծս մնացել է տափին. մեկ էլ տուն չգնացի. ասացի գուցէ դու աւելորդ ունենաս:

— Ունեմ, ունեմ... գնա «Փոնփոխիկի» տակ, կենեղ սամբներ էլ կան, մասաղկներ էլ. շոկիր, որը հարկաւոր է, տար:


Տերտերը գնաց:

Յիսուսն անց կացած մի մարդ եր Տեր-Սիմօնը, հագնուած, ինչպէս մի աւելասաւոր գիւղացի. — նոյն տեսքները, գլխին կապած նոյն բաշկիւնակը, նոյն սանու գործած, կոպիտ հաստ չուխան, դեռ քեւերքն էլ կարկասած: Նրա ֆահանայ լինելը կարելի եր գուշակել եկեղեցում ժամերգութեան ժամանակ, ու վրէն գցած ֆահանայական հնամաւ գգեսից, իսկ դուրսը՝ մի քիչ երկարաւուն մազերից ու խիտ, մինչեւ կարծքն իջնող փառաւոր, բայց անխնամ բողած ու բաւական ներմակած միտմբից:

Գիւղը փոքր եր. ժողովուրդը — իր քիչքանով օրուայ ապրուստը հայրհայրող. ուրեքն էլ նրանք ցանկանային իրանց հոգեւոր տերին փառաւոր պահել, դարձեալ չեր լինի, որովհետեւ իրանց եկամուտի վրայ անքիւ ցաւեր կային ծանրացած... Իսկ Տեր-Սիմօնի ընտանիքը բաղկացած եր տասնութից հոգուց, եւ հազիւ եր կարողանում նրանց հացը հասցնել: Ինքն էլ խղճով, խղճմանով մարդ եր. ո՛չ միայն չունեւորից բան չեր առնում, այլ եւ տալիս եր իր ունեցածից: Փահանայական աստիճանը նրա համար արգելափակ հանգամանք չեր, եւ իբրեւ մի պարզ, երկրագործ գիւղացի, աւանը չուխան մեջքին ծալած՝ վարն եր անում, ամառը շապկանց՝ կրօնիկներ երեսն ի վար վազելով՝ արտը հնձում, կալը կատում, միշտ օրհնելով Աստուսն եւ օրհնելով բոլորին, որ ազատ ծամակ օգնութեան ձեռք էին մեկնում:

Տեր-Սիմօնն ընկուզեցնու տակ ցանկացածը գտնելով, շապկեց դէպի իր արտը, նահապարհին Մեծ-Տափի տարածութիւնն աչնով չափելով:

808-89  
1006  
29152



ե՛րբ պէ՛սք է վերջացնէ այս ահագին սափր.—մտածեց նա, մտնումն ափսոսալով, որ նրան օգնել չի կարող:

Սակայն Քումաս-ամին օգնութեան կարիք իսկի չէր զգում, եւ չէր ե՛լ ընդունի.—«ամեն մարդ իր ֆրսինովը պէ՛սք է ապրի».—այդ բառերը միշտ նրա բերնին էին եւ ինքը վաղուց արդէն սովորել էր իր ֆրսինովն ապրել:

## IV

Օրերն անցնում էին միմեանց յետեւից. մի օր մտախառն, մի օր անձրեւ, մի օր արեւ՝ գիւղի աշխատւորները, անտարբեր դէպի եղանակների փոփոխութիւնը, շարունակ հերկում էին, եւ հետզհետէ գործ-դեղնագոյն դաշտալայրը խոփերի բերնից սեւ գոյն էր ստանում, նրա հետ եւ Մեծ-Տափը:

Մեծ-Տափը ցունել-հերկելն սկսելուց, չհաշուած կիւրակները, անցել էր քսանութեմ օր:

Ընկալգեցին այժմ բոլորովին սերելքափ էր կոչել: Եզները, որքան էլ լաւ խնամուելիս լինէին՝ նիհարեցին ծանր աշխատանքից, եւ քեւեւ ֆաշում էին լուծը, բայց առաջին օրերի ոյժն ու կայտառութիւնը չկար. այժմ տկօսներում աւելի յանախ էին չոճում եւ առաջուանից աւելի՝ ջանք գործ դնում՝ սեղից բարձրանալու: Գասպարը գազազած, առաւօտներն էլ այնպէս հետէ չէր վեր բռնում սեղից, հազնում ու դաշտ վազում. ինքն-իրան սրտնում էր, օրավարը վերջանալուն անձկութեամբ ու անհամբերութեամբ էր սպասում, եւ տուն դառնալուց, նոյն իսկ չէր մնում հաց ուտելու. սրելները, շորերը հագին՝ յոգնաբեկ, ջարդուած ընկնում էր, ֆնում, եւ երբ աշխատում էին արքնացնել, մի բան ուտեցնելու, ֆնկոխ եղած այնպէս էր ծռնւում ու դժգոհում, որ ֆիչ էր մնում լաց լինի: Միայն Քումաս-ամին էր, որ բւում էր, քեւ անվերջ կարող է գործը շարունակել, եւ կարծես ափսոսում էր, որ աշխատանքը շուտով կը վերջանայ. —սիրագեղ արտայայտութիւններ՝ դէպի Մեծ-Տափը, գուրգուրանքներ՝ դէպի եզներն ու մերկացած ընկալգեցին, նախկին հանդիսաւորութիւնը, սերմ գցելու ժամանակ. —այդ բոլորը կային. սակայն աչքի էր ընկնում, որ Քումաս-

ամին այժմ կենտրոնացած է աշխատում, հոգին չէ ընդգրկում միաժամանակ բոլորն, ինչ որ իր գործի հետ էր կապուած, եւ քեւեւ ինքը ոչինչ ու բնական էր համարում, այնուամենայնիւ զգալի էր, որ նա, երբ խոփի դիրքը փոխելու համար հարկաւոր էր լինում ուղիղ կանգնել, հազիւ էր կարողանում մեջքը դրացնել, ձեռների մորթին աւելի՛ էր նախնուել ու յօդերը հասացել, եւ ափերում ու մասների վրայի կոշերն աւելի էին շասացել ու մեծացել:

Քումաս-ամին այդ բոլորին ուստրութիւն չէր դարձնում. բայց երբ նայում էր եզներին ու նրանց նիհարած կողերը տեսնում, սիրտը մեմնում էր, եւ աւելի՛ էր գոռ սալիս գուրգուրանքին ու փաղաֆեանքին: Եզներն, իհարկեւ, սիրով էին ընդունում գուրգուրանքն ու փաղաֆեանքը, —այդ նկատելի էր նրանց հպնալուն աչքերից, —բայց դրանցով կողեր չէին հասանալ...

Հասաւ վերջապէս ֆաշուչոսութեան օրը:

Այդ օրն, ի մեծ ուրախութիւն Գասպարի, գործը պիտի վերջանար, այն էլ —մինչեւ կեսօր:

Քումաս-ամին եւս գոն էր. եւ երբ առաւօտը եզներին լծի տակ ֆաշեց, մի առանձին բաւականութեամբ ու ժպտադէմ դարձաւ նրանց:

— Հը՛, յոգնե՛լ եմ... մտաղ լինեմ ձեզ.—ասաց նա.—բաւ ալեւորն ինչպէ՛ս է անում. մի տեւե՛ք.—եւ նա ձեռները լայն բաց անելով՝ մեկնեց եզներին.—Եթէ ուզեցամ մասներս կոտորել, կամ իրար կպցնել, չի դառնայ. վրայ չեն գալիս... արանքներովը նապասակներ կ'անցնեն... Ձեր ուտերն էլ բարակել են, բայց վնաս չունի. ֆիչ է մնում. մինչեւ կեսօր կը վերջացնենք, այնուհետեւ՝ ես ձեր հարաքերին դուրքան, հանգրտացեք ինչքան կ'ուզեք եւ կեւեք ձեր հալալ աշխատանքը .. Ասումա՛ծ տայ՝ մեր Մեծ-Տափն էլ կըրծի եւ մեզ երեսի վրայ չի բողնի:

Քիչ յետոյ արծաթի պէս պսպղացող խոփը դարձեալ խրուեց հոգի մեջ:

Գասպարն այժմ հրնուանքի մեջ էր: Լծի վրայ նստած,

նա-էլի՛ այնպէս կկլալով ու իճսահով եր երգում, ինչպէս  
 ֆանուչորս՝ or առաջ, երբ քարմ ուժերով լծի վրայ ելաւ ու  
 ոտներով փոկը գրկեց: Նոյն իսկ նրա ձայնն այժմ աւելի զիլ  
 եր, եւ ինքնահնար երգերն—աւելի բանաստեղծական ու խրա-  
 խուսիչ: Եւ քանի աղօսներն աւելի էին մօտենում հարեւանի  
 սափին, նոյնքան նրա սրամաղբուրներն աւելի եր բարձրա-  
 նում:

Կեսօրին ֆիչ մնացած, էլ Մեծ-Տափում շուռ չսուած մի  
 քիզ հող չմնաց, եւ վերջին աղօսն անցնելով, խոփը կանգ  
 առաւ հարեւան սափի սահմանում:

Գասպարը բռաւ լծից ու կանգնեց եզների առաջ:

Թումաս-ամին բաց բողեց մանր, մի ֆիչ դժուարութեամբ  
 մեջքը դգացրեց, աչքը գցեց Մեծ-Տափին, որի սահմանը հազիւ  
 երեւում էր հեռւում, ապա ֆաղբը ժպտով մօտեցաւ եզներին  
 ու լուծն արձակեց:

— Մենք մեր բաժինը սյրժանք. հիմա խօսքը երկնքինն է.  
 —ասաց նա, եզներին դառնալով. —դէ գնացեք, Սարօ, Խու-  
 մար... ամեն սարի լաւ եղբօր պէս ինձ հետ լծում՝ ֆաւել էք  
 մեր սան լուծը... Աքոաւ, Ծաղիկ, Ասուած ձեզ ցաւից, չո-  
 ռից ազատ պահեք: Գնացեք, մասաղ, հանգստացեք, մինչեւ որ  
 ժամանակին նորից կը լծուենք միասին:

## V

Գիւղի դիրքն աւելի բարձր եր, քան դաւեսերինը. եւ այն-  
 տեղից պարզ երեւում էին բոլոր արտերը, որ անագին սարա-  
 ծուրեամբ սեւին էին տալիս հարթ դաւեսալայրում: Տեղ-տեղ  
 միայն, մի կտոր այստեղ, մի կտոր այնտեղ՝ խամ սափեր կային,  
 որ հերկուածներէից որուում էին իրանց մուր-գործ գոյնով.  
 այդ սափերը յոգնած էին, եւ տերերը մի սարի հանգստութիւն  
 էին տուել, առանց ցանելու բողնելով:

Վար ու ցանքը վերջացնելուց յետոյ, գիւղացիք էլ մի  
 առանձին գործ չունեին կատարելու, չհաշուած ընթացիկ աւ-  
 խասանքները, որ միշտ կային ու կային. ծանր գործերի շրջանն  
 անցել եր, եւ գիւղը հանգստանում եր:

Հանգստանում եր է՛ւ Թումաս-ամին:

Տափ եղանակներին պատի սակ արեւկող արած՝ ֆաղբը-  
 ֆաղբը զրո ցներ եր անում, յիշողութիւններ պատմում, խօսա-  
 կիցներին աղանջ դնում, սակայն աչքը շարունակ Մեծ-Տափին  
 պահելով, որի տղը հեշտութեամբ եր գտնում քե՛ մօտիկու-  
 րեան պատնառով եւ քե՛ նրա համար, որ ընկուզեցին ինքն  
 ըստ ինքեան մի մեծ նշան եր:

Նայում եր, եւ մտով գգում, գեղեցիկ, ընտրովի խօսքեր  
 ուղղում Մեծ-Տափին: Այնտեղ եր ծածկել իր յոյսն ու ուրա-  
 խութիւնը, սեւ հողի սակ. ցորենի ամեն մի հասիկի հետ իր  
 արտից մի կտոր քաղել եր այնտեղ. այնտեղ եր պան տուած  
 իր բազմանդամ ընտանիքի կեանքն, ապրուստն ու ապահո-  
 վութիւնը...

Մտածում եր Թումաս-ամին եւ շատ անգամ էլ դիմանալ  
 չկարողանալով արտուն ամբարուող գգացումներէի յորձան-  
 քին, կամաց-կամաց իջնում եր ներքեւ, մի անգամ պտոյտ տալիս  
 Մեծ-Տափի չորս կողմով, գալիս եր, ընկուզեցում եւս այցելում,  
 մի ֆիչ նրա սակ նստում, ու նորից տուն վերադառնում:

Իր յանախակի այցելութիւնները մի անգամ ընդհատեցին  
 ամբողջ եօթն օրով. անձրեւը, շաղն ու մեզը բոյլ չէին տալիս  
 դաւես դուրս գալու, այնքան էին ցեխ ու լարժուն դարձել հա-  
 նապարհէները: Գնալ, իհարկե, կարելի եր մի կերպ. եւ Թու-  
 մաս-ամին մի-երկու անգամ ձեռնափայտը վերցնելով, ցանկա-  
 ցաւ իջնել դեպի դաւես. բայց ազին երեսարանք տուտ, քե  
 եւ անձրեւին, եւ մինչեւ ձնկները հասնող ցեխերին ի՛նչ մի  
 ստիպողական բան կայ, որ հանդ է դուրս գալիս, ցեխաքա-  
 րախ լինում ու հարսների գործն իզուր տեղից շատացնում.  
 եւ Թումաս-ամին, ազու առարկութիւնների նշմարութիւնն  
 ընդունելով՝ նստեց տանը:

Ուրեքորդ օրը մեզը ֆաւուեց, շաղը դադարեց եւ պայ-  
 ծառ արեւը վերջապէս փայլեց երկնում: Այժմ հարիւր բոկով  
 Թումաս-ամուն տանը պահել չէր կարելի. նա հագաւ տեխ-  
 ներն ու դուրս եկաւ տնից:

Երբ կարօսած արժուի եկաւ, հասաւ Մեծ-Տափին, տեսաւ, որ այստեղ-այնտեղ ցորենը ծիլ ու հողի երեսն է դուրս եկել:

Երկնի պայծառ արեւի նման փայլեց Քումաս-ամու դեմքը. հոգու զմայլանք մասնող մի զարմանալի բարի ժպիտ նսեց նրա աչքերին ու երեսին, եւ նրա հետ Մեծ-Տափն էլ խաղաց, ժպտաց,

— Ա... ծիլ էք.—ասաց նա, զգացմունքների ջերմութիւնից բերել դողացող. քաղցր ձայնով.—ձեզ ծլեցնողին մասաղ. ծլեք, զարդարեցեք հանդերք, ուրախացե՛ք Մեծ Տափին, որ ես էլ ուրախանամ, երկինքն էլ, եւ մեզ հետ—բոլորը:

Մի անգամ ծիլը որ սկսուել էր, այնուհետեւ ցանած սերմերն աւելի՛ արագութեամբ սկսեցին դուրս գալ հողի երես, բարակ, դեղնականաչ ծիլերով, եւ մի սասն օր յետոյ Մեծ-Տափն ու միւս դաշտերը ծածկուեցին մի աչք պարարող, զմայլելի, մասաղ կանաչով:

Քումաս-ամին, որ ցորենի առաջին ծիլերը տեսնելուց այնպիսի հոգեկան բերկրանք էր զգացել, այժմ, բնդնակառակը, քանի կանաչը բարձրանում էր, նոյնքան էլ անհանգստանում էր: Եւ նա անհանգստանալու խոր պատճառներ ուներ.—չնայելով որ ձմեռը վաղուց արդեն մտել էր, բայց եղանակը սառ էր, չէր փոխում, ու ձիւն չէր գալիս, իսկ կանաչն աճում էր ու աճում: Եւ Քումաս-ամին վախենում էր, որ նախ քան ձիւն գալը կարող է «փանգիւ» անել, սառը քամի փչել ու կանաչը «կտրել», արժն ու իր յոյսերը մի օրում ոչնչացնել:

Այդ միտքը քեւ ուրիշների մօտ բաց չէր անում, սակայն իրան սանջում էր. եւ ամեն իրիկուն անկողին մտնելիս, ու ամեն առաւօտ անկողնից ելնելիս, ուշադրութեամբ երկնի չորս կողմերն էր դիտում, այնտեղից լինելիք եղանակը գուշակելու:

Մի օր, արեգակը մտնելու ժամանակ, վերջալոյս չերեւաց, իսկ իրիկունը, երբ մթնեց, երկինքը բոլորովին փոխուեց, բարձրում ոչ մի ասղ չփայլեց ու օդը մի տեսակ ծանրացաւ: Քումաս-ամու սիրքը դողաց. այդքան մութ լինելը բոլորովին

ձեռնառ չէր: Եւ երբ անկողին էր մտնում, Քումաս-ամին զգաց, որ բուլացել է եւ սիրքը տեղը չէ:

ձիւն է, պառկեց, երկար աղօթեց ու մի քիչ բերեւացաւ, բայց դարձեալ փունը չէր տանում. ականջը շարունակ դուրս դարձրած, աշխատում էր մի ձայն որսալ, քե, սառը քամին չի՞ սկսուել արդե՛տ... Այդ սպասողական-ջղային դուրբիւնը տեսեց մինչեւ կես գիշեր: Բայց վերջապէս հաւկաւոր էր իմանալ, քե ի՛նչ է կատարում դուրսը. եւ Քումաս-ամին, մի վստահաւոր բեմամուց վախեցողի նման, դանդաղութեամբ մօտեցաւ դուրսը, առաջ մի փոքր, յետոյ աւելի շատ բաց արաւ ու նայեց դեպի դուրս:

Բայց հենց գլուխը դուրս հանեց դռնից ու մի քիչ ուշադրութեամբ նայեց, ննույ ծանրութիւնը գորուեց նրա արտից, մի հանգստացնող հոգոց հանեց,—«Փօռք Տերին»—շեշտաց ու դարձաւ իր տեղը: Ձիւնը խոտոր փաթիլներով գալիս էր ու հանդարտութեամբ նստում գետնին. քամի բոլորովին չկար.—ձիւն առանց քամու—ամենացանկալի բանն է ձմեռը երկրագործի համար:

Առաւօտեան, երբ Քումաս-ամին արթնացաւ, ամենից առաջ յիշեց, որ այդ գիշեր ձիւն է եկել: Շապ-շապ տրեխները հագնելով ու չուխան ուտերը գցելով, դուրս եկաւ սուզելու, քե ձիւնը ո՛ր աստիճան առատ է իջել:

Ելաւ կտուրն ու նայեց դեպի լեռները.—ամբողջապէս սպիտակ էին. նայեց դեպի դաշտերը,—ոչինչ չէր երեւում, բացի այն խոտերէն, փայլուն ձիւնից. նայեց դեպի անտառը,—ծառերի մերկ ճիւղերն ու շիւղերը ծանրաբեռնուել էին ձիւնով. մահակը խեց ձիւնի մեջ,—շերքը հաս էր, մի արեւի չափ: Քումաս-ամու սիրքը լայնացաւ ու աչքերը փայլեցին շնորհակալութեան փայլով:

Աչքը գցելով դեպի Մեծ-Տափի կողմը, նա ծիծաղեց:

— Ել չեմ վախենում. վերմակդ հաս է.—հանաք արաւ նա.—երեք օր իբր վրայ քամի փչե, էլ ոչ Քումաս-ամին կը դողայ, ոչ դու:

Տեր-Սիմօնը երեսաց, ցրտից մի քիչ կծկուած:

— Հաւան ես, թումաս-ամի—ասաց նա ուրախ ձայնով ու ձեռքը մեկնեց դեպի ձիւնապատ լեռներն ու դաշտերը:

— Հաւան եմ.—պատասխանեց թումաս-ամին.—մասա՛ղ եմ Աստու դալամին. նա աշխատաւորի ֆրիւնի ամեն մի կարիք հաշուում է ու գումը իր դավթարում. բա մեզ իսկի անտե՛ս կ'անի:

— Տարին լաւ է սկսուել. յոյս առ Աստուած, որ լաւ էլ վերջանայ.—նկատեց տեսերն ու առաջ անցաւ, դեպի մարագ. բայց երբ մի ֆանի ֆայլ արեց, մի բան միտն ընկնելով, կանգնեց, նայեց թումաս-ամուն, որ դեռ տեղից չէր շարժուել, ու գլուխն օրօրելով, ժպտաց.—արմանալու բաներ երկրիս վրայ շատ կան.—շարունակեց նա.—երբ ես դեռ տիրացու էի ու ձեռնադրուելուս գործով ֆայլաֆ էի գնացել, էլի նիւտ եւ նիւտ սրա՞նման ձիւն եկաւ. շա՛տ ձիւն. առանց ֆամի... եւ մինչդեռ իմ սիրտս ֆամ-ֆամ էր լինում ուրախութիւնից, մտածում էի, թէ մեր գիւղումն էլ եկած կը լինի դրանից ու ձիւնածածկ ցանֆսս էր ներկայանում աչքիս առաջին, մի տեսնիք, թէ ֆաղաֆում ինչե՛ր էին անում... մեղա՛յ Աստուծոյ, մեղա՛յ Աստուծոյ... քիչ էր մնում ձիւնն էլ հայտնուելն, եւ մեկն էլ... —եւ ի՞նչ է,—ասում էին նրանք.—ման գալ չի լինում... ցո՛ւրտ է .. ցե՛խ է դառնալու... է՛ն,—արաւ տեսերն ու ձեռքը քափ տալով, այս անգամ հեռացաւ արագ ֆայլելով:

Երբ ձիւնն էլ իջաւ առաստաբար ու հաս խաւով ծածկեց դաշտերն ու ձորերը, մի հոգեկան կատարեալ անդորրութիւն տիրեց թումաս-ամուն. եւ ինչպէս Մեծ-Տափը քնել էր ձիւնի տակ, կարծես թումաս-ամին էլ նոյնպէս քնեց, մինչեւ վերակենդանութիւն, մինչեւ գարուն...

## VI

Չմեռը մօտեցաւ ելին, գարունը կանգնեց դռանը:

Սպիտակ սաւանի պէս փռուած ձեան շէքսը դաշտերում փոքր առ փոքր սկսեց հալուել ու բարակել. լեռների կրճերից, բարձրավանդակներից փոքրիկ վտակներ ծայր առան, մեղմախօս մրմնջոցներով դեպի հովիտները վազելով:

Մի ֆանի օր յետոյ դաշտը տեղ-տեղ բացուեց իր ձմերային ծածկոցից ու ձնծաղիկներն իրանց քերթիկներով համբուրուեցին արեւի շողերի հետ: Մանուշակ դեռ չկար. բայց նրա կանաչ քիթիկները հանդես եկած, օրեցօր սպասում էին բնութիւնը զարդարելու իրանց համեստ ծաղիկներով:

Արեւն, այժմ աւելի՛ փայլուն, իր աստիճանաբար ջերմացող հառազայքները երկրի երեսին փռելով, աշխատում էր դուրս կոչել այն կեանքը, որ կար, բայց որ բնած էր ու քաղնուած էւ այժմ դանդաղում էր իր ներկայութիւնը ցոյց տալու:

Ժամանակի հետ ձիւնը բոլորովին անհետացաւ դաշտերից ու այգիներից. մի կտոր միայն մնաց ժամանակաւորապէս Սիպտակ-Սարի գլխին քառած, եւ մի ֆանի կտոր էլ—նայն լեռան այս ու այն գոգում քաղնուած, որտեղ արեւն իրիկնադէմին միայն, արդէն բուլացած հանանջներով կանգ էր առնում մի բոպէ ու սահում, հեռանում:

Անտառներում ու այգիներում ծառերի շիւղերի վրայ, յողերի տեղերում փոքրիկ ուռոյցքներ դուրս եկան, որ, մեծանալով-մեծանալով, պատուեցին եւ ցոյց տուին իրանց ներսը քաղցրած գաղտնիքը.—այնտեղից մասաղ տերեւների ծայրերը երեւացին:

Մի ջուխտ ծիծեռնակներ, հորիզոնում երեւալով, սրաքեւ հասան, մի ֆանի ֆահան պոյտներ արին ծանօթ գիւղի վրայ ու նստեցին եկեղեցու տանիքին:

Սյդ բոլորը ցոյց էր տալիս, որ գարունն սկսուել է, բայց իսկական գարունը—դեռ չէ:

Անց կացաւ մի ֆանի ժամանակ եւս, եւ ահա՛ սաղարբաւորուած անտառները լցուեցին տեսակ-տեսակ գեղեցիկ ու երգեցիկ բոջուկներով. անքիւ ծիծեռնակներ երկնում անհանգիստ քափչփներ անելով, կամ ծառերի հոգներին, տան սրանի ծայրերին նստած, ուրախ-աններդաշնակ հուռուղիւններով օդը բնդացրին, երփներանգ բզեզներն ու թիթեռներն սկսեցին ծաղիկ-ծաղիկ քոչկոտալ, դաշտերը, հովիտներն ու բլրակները զարդարուեցին քաւեայ կանաչով ու չմնաղագգեստ ծա-

դիկներով, եւ բնութիւնը, պննագարդուած բիւր-բիւր սփանչե-  
լիներով, ակնախսիս երանգներով փայլեց:

Աղբիւրների ղհնոցները, կաշաղակների չրքչրոցները, երգեցիկ բռնունների դայլայլներն այժմ մի առանձին քովչու-  
քիւն ու գրաւչութիւն ստացան, եւ զարնան կենսասու շնչով  
վերածնուած, ցնծում եր երկիւնք, ցնծում եր եկիրը, եւ նրանց  
հետ—Մեծ-Տափը:

Թումաս-ամին, վերակենդանացած, ջահելացած, գերագոյն  
հրնուանքի մեջ եր: Նա տեսնում եր, որ իր եւ իր աշխա-  
տակիցների ջանքերն ապարդիւն չեն անցել, տարին հրաշալի  
է, եւ Մեծ-Տափը մի այնպիսի կանաչ է դուրս գցել, որին  
նախանձել կարելի է: Երէ, ինչպէս սկսուել էր, այնպէս էլ  
վերջանար, ապա իր տան հացը կրկնակի ապահովուած կա-  
րելի կը լինէր համարել:

Արք բզաչափ բարձրացել էր. էլ քողնել չէր կարելի,  
հարկաւոր էր փողհանել: Իրիկունն այդ մասին խորհրդակցե-  
լով, մի առաւօտ Թումաս-ամին, բոլորին «մասաղ ու ջան»  
ասելով, հաւաքեց հարսներին ու քոռներին եւ ազու հետ մի-  
ասին իջաւ դաւոտ, Մեծ-Տափը փողհանելու, աւելորդ, արտի  
համար վնասակար բոյսերից մաքրելու:

Ընկուզեկին, խիտ առ խիտ պննուած լայն, կանաչ տե-  
րեւներով, քանձր շուտ էր տարածել տակը: Թումաս-ամին  
սիրով լի հայեացքով նայեց ծառին, տերեւների արանքներում  
քաղնուած, հազիւ միայն կերպարանաւորուող ընկոյզները  
դիտեց եւ ժպտաց իր այն բարի ժպտով, որ փայլում էր նրա  
երեսին, երբ առհասարակ ցանկանում էր իր սրտում հաւա-  
փուած սիրուց մէկին բաժին հանել:

— ձղներդ զարդարել ես, Փոնփոնիկ,—խօսեց Թումաս-  
ամին.— գիտես, որ արեւ է լինելու, անձրեւ է գալու, եւ Թու-  
մաս-ամուն մի պատասպարուելու տեղ է հարկաւոր. դրա հա-  
մա՛ր աղքատ խիտ ես զարդարուել... Քեզ զարդարողին մեռ-  
նեմ... շուտու՛մը կը պառկեմ, կը հանգստանամ:

Քաղհանի եկած երեխաներն ու հարսներն անվերջ ու-

րախօսքեամբ, քովալով վազեցին դէպի արք: Թումաս-  
ամին հոգեբուղիս ծիծաղով մօտեցաւ նրանց խմբին:

— Մտեխի նուտեր էք, մտեխի,—ասաց նա.—մի տես-  
նեմ ինչպէ՛ս էք Մեծ-Տափի ֆեճը տեօք անելու.—ու մի փանի  
հրահանգներ տուեց.—տար-տար գնացեք, չփողհանա՛ծ տեղ  
չքողնեք. գոյց կացեք, ձեզ մասաղ լինեմ, ցորենի քաղ չպո-  
կեք. ամեն մի քաղը մի կտոր հաց է... երէ փողհանելու խո-  
տի ու ցորենի ցողունները միասին են դուրս եկած, խոտը  
չփաշեք, քէ չէ ցորենն էլ հետք կը պոկեք. կուացրեք ու եղուն-  
գներով կամ դանակով կտրեցեք հողի բերնից... Թումաս-ամին  
ձեզ մասաղ, տաստակ ամենեւին չքողնեք. համ ցորենն է խե-  
ղդում, համ հնձելու ժամանակ մեզ շարչարում, ձեռներնիս  
ծակոտում. արմատով, անպատհա՛ն արմատով հանեցեք: Դէ,  
Աստու անունը տուեք ու սկսեցեք, ես էլ հիմա կը գամ:

Քաղհանաւորները գործի դիմեցին, իսկ Թումաս-ամին  
վերադարձաւ ընկուզեկու տակ, չուխան հանելու: Ազին էլ  
այնտեղ էր. սնից բերած սոխը, մաճունն ու հացն էր տեղա-  
ւորում, եւ, որ գլխաւորն է, կրակ էր արել ու... սամովարն  
էր գցում: Սամովարն այնքան հազուադիւտ դէպքերում էր  
հանդէս գալիս գիւղում, եւ ընկուզեկու տակ քէյ խմելն այն-  
պիսի հրապուրանք էր պարունակում իր մեջ, որ դեռ երեկ  
իրիկունն այդ մասին հարսների մեջ ուրախ ղհչոց էր ընկել:

Թումաս-ամին, չուխան ծառի նիւղից կախելով, քաշ-  
կինակը գլուխը կապեց:

— Դու է՛լ ես փողհանի գնում,—դարձաւ նրան ազին:

— Բա՛... ինձա՛րկէ,—զարմացաւ Թումաս-ամին, քէ  
ինչո՛ւ են իրան այդպիսի միամիտ հարց տալիս:

— Ձեռներիդ հաճե՛նաճե՛նք դեռ իրար չեն կպել, ո՛ւր  
ես գնում,—նկատեց ազին.—հարսները, երեխաները կը փող-  
հանեն:

— Ախր վախենում եմ լաւ ղհողհանեն,—հեզուքեամբ  
պատասխատեց Թումաս-ամին:

— Փառք Աստու, խամ չեն,—առարկեց ազին.— նստի  
դեռ մի բաժակ ղայ խմիր. սամովարը հիմա կ'եփի:

Թումաս-ամին, շոյուած կնոջ հոգասարուքիւնից, ուզեց մի քաղցր բան ասել, բայց միայն ժպտաց ու

— Էս էլ քու խաբրու,—ասաց ու նստեց:

Մի քանի րոպէ չանցած, ազին բաժակը քեյով լի դրեց Թումաս-ամու առաջ:

— Սարվազեց աղջիկ, երբ ինձ շաբաթ մի անգամ Փոնփոփի շուտում, Մեծ-Տափի կողմին չայ տաս, էլ ես չեմ մեռնի,—հանափի ձեռով ասաց Թումաս-ամին, բայց այդ խօսքերը նրա արտից էին բղխում:

Յետոյ նայեց քաղհանաւորներին, ուրախացաւ նրանց բարձրաձայն ճիւղներով, աչքը գցեց իրանց արտի միւս կողմերն ու տարուելով զանազան մտքերով՝ քեյը մոռացաւ:

— Ընկուզենիդ մի սալ աշխարհ արժէ, Թումաս-ամի, —ձայն տուեց մեկը եւ Թումաս-ամին ուշաբերուելով յետ նայեց, Տեր-Սիմօնին տեսաւ, արխալուղած, քաշկիկակը գլխին պինդ կապած, որի նակասի կողմը քշուած էր ճիւղից:

— Պա՛հ, ա՛ դէր, Ասուած է քեզ հասցրել,—ուրախացաւ Թումաս-ամին, տեղից բարձրանալով.—էդ ո՞րտեղից ես գալիս:

— Այգում առուներ էի փորում, իսկ մերոնք արտումն են. ասացի գնամ, տեսնեմ տիրակիցս քաղհանի հետ ինչպե՛ս է եօլա գնում,—պատասխանեց քաղհան:

— Դէ նսիր, նսիր մի-մի բաժակ չայ խմենք,—ասաց Թումաս-ամին, ու յիշելով, որ Տեր-Սիմօնն ընկուզեցու մասին գովական խօսքեր ասաց, ինքն էլ աւելացրեց.—հա՛, Փոնփոփիս ուրիշ ծառ է. ամեն անգամ արան նայելով, սիրս մի տեսակ պայծառանում է:

— Լա՛ւ ծառ է, փառաւոր. դրախտի արժանի ծառ,—տեսեց տեսերն ու ազու մեկնած քեյի բաժակը սազացրեց հողի վրայ:

— Ա՛ դէր, դրախտ ասացիր. դրախտումն ընկուզենի եղե՛լ է,—հետաքրքրուեց Թումաս-ամին:

— Ի հա՛րկէ, ի հա՛րկէ... բոլոր պտղատու ծառերից Ասուած սնկել է այնտեղ:

— Ասուած՝,—տեղից մի քիչ բարձրանալով, զարմացած հարցրեց Թումաս-ամին:

— Հապա՛... Ասուած,—հաստատեց տեսերը.—ծառայ եմ նրա աղին. ինքն իրա ձեռքով եղեմում մի պարտեզ սնկեց եւ այնտեղ, ծառերի տակ նստում էր, հանգստանում: Ասուածաւելումն է գրուած:

— Իրա ձեռքով հողը փորել, ծառե՛ր է սնկել:

— Իրա ձեռքով, Իրա ձեռքով... մասալ եմ նրա ձեռքին,—կրկնեց Տեր-Սիմօնը:

Թումաս-ամին աղօթող մարդու ջերմեռանդութեամբ՝ մի հոգեզմայլ հայեացք գցեց երկնքին:

— Մենք է՛լ վարում ենք, մենք է՛լ ծառեր ենք սնկում... մեր աշխատանքը հալալ աշխատանք է... մենք ասուածային գործ ենք կատարում,—աւելի իր մտքերին պատասխանելով, խօսեց Թումաս-ամին, լի խորին հաւատով ու ջերմութեամբ դէպի նա, որ առաջին տունկն էր սնկել:

— Ուղիղ է ասածդ, քե՛ «մեր աշխատանքը հալալ աշխատանք է»,—վրայ բերեց տեսերը.—քո ճիւղնովդ քո հացն ուտես.—այս է՛լ Ասուած, է ասել եւ դարձեալ գրուած է Ասուածաւելում... մեր հացը մենք մեր ճիւղնովն ենք ուտում, եւ դա է միայն, որ ընդունելի է Ասուած:

Երբ քեյ խմեցին ու Տեր-Սիմօնը դէպի իրանց արտ դիմեց, Թումաս-ամին էլ մի կողմ անցաւ, որպէսզի բոններն ու հարսները գան եւ ազատար իրանց բաժինը վայելեն:

Տեսերի հետ ունեցած փոքրիկ խօսակցութիւնից յետոյ, Թումաս-ամին մի տեսակ խորհուն դրութեան մեջ ընկաւ.—Ասուած ինքը հողը փորել է եւ ծառ սնկել... Փա՛ռք Գեզ, Ասուած, փա՛ռք Գեզ...—մտնում էր նա, եւ Մեծ-Տափին նայելով, հրճուում, բերկում, որ ինքը եւս հողը փորել է, սերմ գցել, որ ինքը, ինչպէս քիչ առաջ ասաց, ասուածային գործ է կատարել: Եւ այդ գիտակցութիւնը ջերմացնում էր նրա հոգին, սիրքը մխիթարում:

## VII

Մեծ-Տափում վնասակար բոյսեր քիչ կային, եւ քաղցր երեք օրից յետոյ վերջացաւ: Այժմ արեւին վերաբերող ուրիշ աշխատանք չկար. հարկաւոր էր միայն սպասել, մինչեւ որ հասունանար, ու հնձուորներն արտք մտնէին իրանց մանգաղներով: Բայց բացի Մեծ-Տափը, թումաս-ամին մի այգի եւս ուներ: Հօրից միայն Մեծ-Տափը ժառանգելով՝ նա տասնեակ տարիներ մասները հողի վրայ մաշելով՝ կարողացել էր ինքը իր ձեռքով մի այգի սնկել, մի այնպիսի այգի, որ տարիների ընթացքում հոգատար սիրոջ հսկողութեան տակ անելով, գիւղի ամենալաւ այգիներից մեկը դարձաւ: Եւ այժմ, քեւ. նրա խնամելն ու մշակելը թումաս-ամին յանձնել էր մեծ տղին, բայց եւ այնպէս, արեւ գործը վերջացնելուց յետոյ, էլի սիրք չէր դիմանում, եւ նա շաբաթը մի քանի անգամ այցելում էր այգին, ու, մի առանձին անելիք չունենալով, քանի որ բոլոր աշխատանքները կատարուած էին, ծառերն էր դիտում, նիւղերը քննում, առուները սարքում, որդուն ցուցմունքներ տալիս, եւ անելի շատ զբաղուած ա՛յն մի փոքրիկ կտոր ագաս հողով, որ այդու ծայրումն էր գտնուում, եւ որտեղ թումաս-ամին զանազան տեսակ կանաչեղէններ էր ցանել: Այգում մի քանի ծամ պտուղներուց ու ծառերին քամաւայ անելուց յետոյ, վերադառնում էր տուն ու բարձրանում էկեղեցու բակը, որտեղ հաւաքուած էին լինում գիւղի ծերունիները, Տեր-Սիմօնն ու աշխատանքից ագաս մարդիկ. գալիս էր եւ սկսում նրանց հետ զրուցել ու ականջ դնել ուրիշներին:

Այդպիսի օրեր շատ անցան, մինչեւ մայիսը մօտեցաւ իր վերջերքին:

Արտքը հասկանալու, դատարար գեղազարդել էին մի նոխ գեղեցկութեամբ, եւ գեփիւրը՝ ցողունների վրայից կտաւած միլիոնաւոր հասկերը շոյելով՝ մի հրապուրիչ, անուշ խճոց էր տարածում հարթավայրում:

Օրը կիւրակի էր:

Եկեղեցու բակում մի բարձր գերան կար սնկած, ծայրին

խաչաձեւ մի փայտ խփած, որից կախուած կային երկու հաս փոքր, բայց զլաձայն զանգակներ:

Թումաս-ամին նստել էր այդտեղ, երեսը դէպի Սիպակ-Սարը, մեջքը զանգափայտին դիմար տուած. նրա դէմ ու դէմ տեղաւորուել էին Տեր-Սիմօնը, ձեռքին մի կեռակոթ գաւազան, որ անտառից էր կտրել, մի քանի ծերունիներ եւ գիւղացիներից նրանք, որ այդ օրը տանն էին գտնուում:

Երկինքը շինջ էր, կապույտ, եւ արեգակն անելի պայծառ էր փայլում այնտեղ: Օրուայ շեղութիւնը, կանաչազարդ բլուրները, գեղեցիկ անտառները, հասունանալուն մօտեցած, մեղմ ալիքներով հօտանց զնացող արտքը միտածամանակ մտաւայնել էին տուել գիւղացիների մտաւան հոգները, նրանց արտքը լցրել մօտիկ ապագայի քաղցր յոյսերով, ու էկեղեցու բակում հաւաքուածները խօսում էին, ծիծաղում, զանազան հարցեր շօտափում, նոյն իսկ համաշխարհային նշանակութիւն ունեցող կննտոս խնդիրներ մեջ տեղ բերում, վիճում, ու միամիտ փիլիսոփայութիւններով՝ վնոում:

— Երեկ օտարութիւնից մի եկող կար,— խօսեց գիւղացիներից մեկը:— Մեծ հանապարհին պատահեցի. քահր ու բունրից, շէնք ու շնորհից երեւում էր, որ խելքը գլխին, գիր կարդացող մարդ է. հարցրի,— Ի՞նչ կայ, ինչ չկայ, Ի՞նչ քաղա խաբարներ կան. եւ նա զարմանալի բաներ պատմեց... Ենթադրեալ բաներ էր իմանում...

Քաղաքից ու գրից միանգամայն կտրուած, միայն իրանց խփին ու մանգաղը նամաչող մարդիկ մեծապէս հետաքրքրուեցին, քե ի՞նչ խաբարներ էր բերել օտարութիւնից եկողը:

— Ի՞նչ էր պատմում,— կանչեցին նրանք:

Հետաքրքիր գրոյցի հեղինակն իր առաւելութիւնն զգալով՝ սկսեց խօսել արդեն ո՛չ իբրեւ ուրիշից լսած դէպքեր պատմող, այլ իբրեւ երկրիս վրայ կատարուող դէպքերին իրագեկ, անմիջական աղբիւրներից տեղեկութիւններ քաղած մի հարդ:

— Ինգլիզի քաղաւորը Լեմսի քաղաւորին կռուի է կանչել,— հեղինակաւոր ձայնով պատասխանեց նա:

— Պա՛հ, պա՛հ... Ինգլիզի քազաւորը... ինչո՛ւ,— աւելի հետաքրքրուած, հարց տուեց ունկնդիրներէից մէկը:

— Ինգլիզի քազաւորը մարդ է ուղարկել Լեմսի քազաւորի մօտ, քե՛ մի աղջիկը մի տղի կը հասնի. աղջիկը տուր տղիս. Լեմսի քազաւորն էլ պատասխանել է, քե՛ ես աղջիկ չունեմ քեզ տղին տալու, որովհետեւ դու մեր հաւատարմը չես: Ինգլիզի քազաւորն էլ բարկացել է, քե՛ ահա՛ ես կըրգամ, համ քեզ քախտիցդ կը գցեմ, համ էլ աղջիկդ կը տանեմ տղիս: Էդ բանի վրայ Լեմսի քազաւորը հրաման է տուել իրա ժողովրդին, քե՛ ում ասամ որ դուրս է եկել, եւ ում բերանում որ դեռ ասամ կայ, մեծ քե փոքր՝ բոլոր հաւատուեան, որ Ինգլիզի վրայ կռիւ եմք գնալու:

— Պա՛հ, քու տունը չհանդուրի,— ձայն տուեց խորին ուշադրութեամբ ականջ դնողներէից մէկը.— յետո՞յ... յետոյ ի՛նչ է եղել:

— Յետոյ էդ հրամանի մասին Ինգլիզի քազաւորը որ լսել է, խաբար է ուղարկել Լեմսի քազաւորին, քե՛ տեղդ հանդարտ նստի. ենքան երկնեմը բռնող պարախօղներ կ'ուղարկեմ քեզ երկրիդ վրայ, որ չես իմանայ, քե՛ ո՛րտեղ ֆօշէս: Լեմսի քազաւորն էլ պատասխանել է, քե՛ ենքան բոփ-բոփաւան կը կապեմ ջանիդ, ենքան դժուար կը քափեմ երկիրդ, որ բռնող պարախօղներդ էլ կը մտնան, քազդ էլ, քախտդ էլ: Հիմա գործն եղպէս դուրսեան մեջ մնում է, միայն մեր քազաւորը հեռագիր է տուել, քե՛ տեղներդ ծանր կացեմք, քե՛ չե՛ վերջը վատ կը լինի,— վերջացրեց պատմողն ու բողբոջ սպաւորութիւնից գոհ, չիբուխը հանեց գրպանից:

Տեր-Սիւսնն անբարեհաս Տրամադրութեամբ դէպի «Ինգլիզի» ու «Լեմսի» քազաւորները, գլուխն օրօրեց:

— Դա Աստուծոն հանելի չէ. սուր վերցնողը սրով էլ կը մեռնի,— նկատեց նա.— մի աղջկայ համար արիւնհեղութիւն են ուզում անել:

Թումաս-ամին գլուխը կախ, ուշադրութեամբ լսում էր պատմութիւնն ու առանց մի խօսք ասելու, ձեռքի մահակով աննպասակ խազեր էր փառում հողի վրայ. բայց երբ տեսնէր

խօսեց, նրա ասածն այնքան դուր եկաւ, որ ինքն էլ ժպտալով գլուխը բարձրացրեց երկու խօսք ասելու:

Բայց երբ գլուխը բարձրացրեց, Սիւսն-Սարը դեմուդեմ լինելով, ամենից առաջ աչքն ընկաւ սարին: Նայեց ու ժպիտը սառաւ բերնին...

Սիւսն-Սարի սակից մի կտոր ամպ, ականջներով, խոզի գլխի ձեւով՝ դունչը վեր էր ցցել եւ կարծես հոտոտում էր չորս կողմը. միին էր ամպը, արննագոյն, դունչը ողորկ, իսկ ցցուած ականջները՝ մագմզոս:

Թումաս-ամին երեսին մի մեղմ քախտ երեսաց, մանաւանդ որ ամպը Սիւսն-Սարի սակիցն էր դուրս եկել: Առանց մի խօսք ասելու, նորից գլուխը փառ ցցեց ու սկսեց առաջուայ նման մահակով հողը խազիւզել:

— Քրիստոս ասել է, որ կը գայ ժամանակ, երբ բոփ-բոփաւանքն, հրացանն ու սուրը կը հալեն, ու նրանցից խոփ ու մանգալ կը շինեն...— դեռ լսածների սպաւորութեան սակ, շարունակեց Տեր-Սիւսնը.— էլ ոչ կռիւ կը լինի, ոչ դարաբա. մարդիկ միայն իրանց հունձն ու փունջը կ'անեն, եւ գառն ու գայլը միասին ման կը գան դաշտերում:

— Խոփ ու մանգալ...— հառաչեց Թումաս-ամին.— ես Նրա անունին մասադ, որ խոփ ու մանգալի մասին է խօսել.— եւ աւելի ոգեւորուելով, աւելացրեց.— Լեմսն ու Ինգլիզը կռիւ են ուզում անել. ինչի համար էլ որ լինի, նրանց կռիւը չարժէ իմ մի մանգալին, իմ Մեծ-Տափի մի ականին, իմ ընկուզեմուս մի տերտին:

Գիւղացիք այժմ խօսակցութեան նիւրբ փոխելով, վար ու ցանքսի մասին սկսեցին խօսել:

Թումաս-ամին, որ մի բոպեով մտնացել էր քիչ առաջ տեսածը, էլի լիւսեց ու աչքը նորից ցցեց Սիւսն-Սարին:

Ամպն այժմ աւելի էր մեծացել, ուռել, եւ դեռ շարունակում էր սարի կուրծքը լիզելով, է՛լ վերեւ բարձրանալ: Նա կորցրել էր իր նախկին ձեւն ու այժմ անքիւ հսկայական բռունցքների էր նմանում, որ միմեանց վրայ բարդուած՝ կարծես մէկին խեղդելու ցանկութիւնն էին տեսնում:

Իսկ արեւը ժպտում էր ախորժելի, հրապուրիչ ժպտով:

— Ա՛ղբ, կսոր ի՞նչ արբերի օր է,— վշտահայեացքով հայտնեց հագի կտրելով, հարցրեց թումաս-ամին:

Տէր-Սիմօնն առանց նրա դեմքին մի բան նկատելու, մասները՝ ծանր-ծանր խոքեց ծոցն ու այնտեղից հանեց երեսի քղբերը պոկուած մի օրացոյց: Ապա երկար նայելուց ու միտքով մի ֆանի անգամ սերտելուց յետոյ, վանկերն իրար հետ դժուարութեամբ կապելով՝ սկսեց կարդալ:

— Սըբոցն թեոդիսոնի Գաղասացոյն, թալիլեայ բժշկին եւ եօթն կուսանաց, որք յԱնկիւրիա կասարեցան:

Թումաս-ամին ակնապիտ, սերտերի բերնին էր նայում ու նրա շարժումների շարժումները դիտում, անունները իւրացնելու համար. բայց խորք, անձանօք անուններ էին. եւ երբ սերտերը վերջացրեց, նրա մտնում միայն «եօթն կուսանաց»-ը մնաց: Թումաս-ամին մի ֆիչ մտածեց ու դարձաւ սերտերին:

— Դրանք մե՞ծ արբեր են,— հարցրեց նա:

— Ուր մեծ չլինին, անուններն օրացոյցում կը սպե՞ն... Եւ՛ս մեծ արբեր են,— հաստատեց Տէր-Սիմօնը:

— Ծառայ եմ դրանց,— ասաց թումաս-ամին ու լռեց, սակայն մտնումը կանչելով.— ա՛յ սուրբ սուրբեր, ա՛յ «եօթն կուսանաց», դո՛ւք մեզ փրկե՛ք պատահասից:

Այդպէս արժի խորքերից աղօթելով, թումաս-ամին մի անգամ եւս վախժխելով նայեց Սիպակ-Սարին. սարի գագաթը հազիւ էր երեւում. ամպերն արդեն գրաւել էին բարձրաբերանները եւ դեռ իրանց յետեւից ֆառում, բերում էին նոր ու նոր ամպեր, բոլորն արննագոյն, սեղ-սեղ նոյն իսկ՝ սեւ:

— Խաղողը լուսնահող ենքան չի սիրում. պտուղը բոռ է լինում, գինին շուր ջուր է կտրում, իսկ վազը դեռ ջահել, արմատները փտում են,— խօսեց փորձուած գիւղացիներից մէկը, երբ խօսքը հասաւ այգիներին ու, առ՝ասարակ հողերի յատկութեանը.— դում սեղը,— շարունակեց նա,— նիտ է, ջուր շատ է սիրում, բայց գինին էլ դիմացկուն եւ խաղողը շատ ֆաղք է լինում:

— Այդպէս է,— համաձայնեցին միւսները:

— Բայց դուք էս սարուայ զօրութիւնը տեսնո՞ւմ եք,— ուրիշ խօսք խօսեց մէկը.— զարմանալի սարի է... Թումաս-ամի, ի՞նչ էս կարծում, մէկին ֆանի՞ կը տայ:

Թումաս-ամին իր անունը լսելով՝ սեղը մի քերեւ շարժուեց:

— Մէկին տեսնուցինք, երբ Աստուած արժանի համարեւ, — պատասխանեց թումաս-ամին, բայց միտնոյն ժամանակ գլուխը շարժեց խորհրդաւոր կերպով եւ աչքերում վիշտ արձայտուեց:

Տէրտերը մի ֆիչ մտածեց ու լռեց, որ թումաս-ամին անա՛ մի ժամից աւել է, որ համարեա չի խօսում, անհանգիստ է եւ անսպասելի կերպով խաբել է:

— Ի՞նչ է, թումաս-ամի, չլինի՞ ազին միտք է ընկել... Ինչո՞ւ էս մքնել,— ծիծաղելով հարցրեց նա:

— Իմ մքնելս ոչինչ, ա՛ դէր. Սիպակ-Սարն է մքնում, Սիպակ-Սարը,— պատասխանեց թումաս-ամին, յօնքերով սարը ցոյց տալով:

Ամենին արագութեամբ շուր եկան ու նայեցին Սիպակ-Սարի ուղղութեամբ:

Սարի սեղ երեսաց միջին ամպերի մի անագին կուտուածք, որի ուտերից տարածուող քերերը կարծես շօշափուկներ լինէին, որ երկնքի երեսն էին հետագօտում: Եկեղեցու բակում զանուկները վախեցան. նրանց երեսներին ուրախ տրամադրութեան հետք անգամ չմնաց. կարծես անյայտ մէկը վայրկեանապէս վրայ հասաւ, վշտի կաթիլներ քափեց նրանց սիրտն ու հեռացաւ:

Եւ մեծ էր վիշտը... Ներհեւում՝ հասկանաճած, գեղեցիկ արտերն էին օրօրում, իրանց հասկերի մեջ ամփոփած գիւղացիների ֆրիքնի արդիւնքը, իսկ այնտեղ ամպերն էին գլուխ վեր հանել, այն էլ՝ արննագոյն, բանձր ամպեր, եւ Սիպակ-Սարի տակից... դա՛ էր վստահաւորը: Ամպերը դիտող գիւղացիների գլխում տեսակ-տեսակ մտքեր եկան, նստեցին՝ մէկը միւսից վատ, մէկը միւսից սարսափելի:

— Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմեա...—

երեք անգամ կրկնեց Տէր-Սիւսեր, աչերն ակնապիտ յառած ամպերին:

— Տէ՛ր, ողորմեա... արձագանգեցին գիւղացիք ու խաչ հանեցին երեսներին:

Մեկ-մեկ իբար զարկով՝ եկեղեցու բակից երկիւղը հաղորդուեց գիւղումը գննուող մեծին ու փոքրին. կտուրներն ու սրահները դարձան մի-մի դիտարան, ուր կին ու երեխայ խուլք-խուլք կանգնած, հիպնոսուածի նման փարցած՝ նայում էին այն կողմը, որտեղից քերես մահն էր մօտ սողում...

Ամպերն աւելի ու աւելի քանձրանալով, դարձան միապաղաղ, ժանգոյն մի զանգուած ու երկնքի մի կողմը վարագուրեցին. բլում էր, որ որքան քանձր, նոյնքան էլ ծանր են այդ ամպերը եւ սարը չպիտի դիմանայ նրանց թակ, պէտք է տալիս:

— Թումաս-ամի, որի՞ցն է,— ամպերը ցոյց տալով, հարցրեց գիւղացիներից մեկն, այլայլուած դեմքով:

— Փի՛սիցն է, քեզ մասաղ... փի՛սիցն է,— քախմալից ձայնով պատասխանեց Թումաս-ամին:

Եւ, ի հաստատարին նրա ասածի, Սիպակ-Սարի կողմից, — ու՛՛՛՛՛՛՛... — մի բան դուռաց անորոշ ու խուլ. դրուռաց ու լռեց: Գիւղի ծայրում մի շուն ողորմագին կաղկանձեց. ծիծեռնակներն անհետացան: Թումաս-ամին մտնում «վաշ» կանչեց. նշանները վաշ էին:

Ամպերը կանոնաւոր առաջխաղացութեամբ տրեցին երկնքին. էլ բաց տեղ չմնաց. արեգակը ծածկուեց նրանց յետևում եւ կիսամութեան պէս մի բան իջաւ երկրի վրայ:

Գիւղը ստանաւ, բեռամուկն էր դիտում, առանց ձայն հանելու. միայն կանայք էին, որ բարձրաձայն որ եւ է սրբի անուն էին կանչում երբեմն ու իսկոյն լռում:

Հեռում սպիտակագոյն մի կայծակ, կոսրած գծերով, վայրկենապէս մտնեց ամպերի երեսին ու կորաւ: Նրան շարժեց մի խեղդուկ որոնց:

Բոպեաշափ տրեց կատարեալ խաղաղութիւն: Բայց անհասկաբար կամաց, ապա աւելի ու աւելի՝ սպառնալից՝ մի խուլ

դղրդոց բարձրացաւ վերէն, անտառի այն կողմը, դուռաց, դուռաց ու յանկարծ տրեց մի այնպիսի բումբիւնով, որ կարծես երկնքի յասակը խորհակուեց:

— Մեղա՛յ Ասուծոյ... ա՛յ Սուրբ Ասուածածին... ա՛յ Սուրբ Գեորգ,— աղերսաձայն մրմնջոցներ բարձրացան այս ու այն կտրից:

Ամպերից իջած մի հսկայական, միանոյլ շեղ շիք, հեռուից գետնին փակուելով, հասաւ անտառին. լուռեց տարօրինակ, բայց փորձուած գիւղացիներին ծանօթ մի երկար խոսք ու յառաջախաղ անձրեւի մի փակի շատ խոտոր կաթիլներ շումբիւնով կտրեցին կտուրներին: Կանայք վախեցած՝ երեսներին հետ սրահներն իջան:

Տէր-Սիւսեր գունաթափ դեմքով՝ հայեացքը չեւեացող երկնքին էր յառել, եւ նրա դալկացած շրթունքները շարժում էին մեղմով: Գիւղացիք յուզուած, անհանգիստ՝ նոյնպէս երկնքին էին նայում. նրանք տեսնում էին, որ անհասկանալի գալիս է, անտառ ու սարապիտի. զգում էին, որ կես ժամից յետո՛յ՝ իրանց փառաւոր արտերի տեղ կարող են միայն կոսրուած, ողորմելի ցողուններ մնալ, բայց անկարող վերահաս արհաւիրքի առաջն առնելու, իրանց ձեռներն էին տարածում դեպի երկնք, կարծես Աստուծոյ ցոյց տալու այն կոտորել, որ ֆրանսիացի աշխատանքից էին գոյացել իրանց արտերը:

Գիւղացի բլրի կողմից մի որոնց, արիւն սառեցնող բումբիւններով գորուեց երկար, եւ անեղ դղրդիւնով, — տրա՛ֆ-տրա՛ֆ... պայքեց գիւղի գլխին:

Տէրերը փարցումից ուշաբերուեց ու լուրեւաբ, հանդիսաւոր փայլելով մտաւ եկեղեցի, մնաց այնտեղ մի փակի բոպե, եւ երբ դուրս եկաւ, գլխաբաց էր, փառաւոր միտքը հողմածածան, շուրջան՝ ուտերին: Աչերում՝ երկիւղածութիւն, դեմքին՝ վեհութիւն, ծանր, բայց վստահ փայլելով մօտեցաւ զանգափայտին, յետ արեց քոկը եւ երկու փայլ յետ-յետ գնալով, — խոնարհեցո՛ւ, Տէ՛ր, զուկն Գո... — կանչեց դղրդոյն ձայնով ու քոկը ձգեց:

Արհաւիրքներով լի օդի մեջ տարածուեց զանգալի զիլ ու

խորհրդաւոր դողանջիւնը: Եւ յուսահասութեան, ընդհանուր լման այդ ծաեր ռպէին՝ զանգակի ձայնը, իբրև յուսոյ մի գօրեղ խարխախ՝ միակ ապաւենը դարձաւ գիւղի համար:

Գիւղացիներէից մի քանիսը յուզուած, զգացուած՝ հագիւ զսպել կարողանալով դուրս բռնել ցանկացող արտասուքի հոսանքը, դարձեալ ու դարձեալ խաչակնեցին երեսունին:

— Ա՛յ Եւնային Տեր-Քազաւոր...— մումնջաց Քումասամին եւ այնպէս հառաչեց, որ արտի մեջ սկսուեց փորուեցիկն աւելի՛ խոր, քան իր խալին եր փորել Մեծ-Տափի կրծքին:

Ապա աչքերը մի քիչ բորբոխուած, ինքն էլ լաւ չիմանալով թէ ի՛նչ է անում, շտապ-շտապ իջաւ դէպի Մեծ-Տափը:

Անձրեւի խոռոր կաթիլներն աւելի շտտացան. գիւղամիջով մի շտտ փոքրիկ վտակ սկսեց դէպի ձորը վազել. եկեղեցու բակում գտնուող գիւղացիք կծկուեցին մտակայ զոմի տրտնում. միայն Տեր-Սիմօնն էր, որ չէր տալիս դիւրքը, եւ բաց գլխով, իր եւ իր հօտի վիշտը արտունն ամբարած՝ անդադար ձեռներն էր շարժում, ու զանգափայտի ծայրին թառած ջուխտ զանգակներն իրանց զիլ ձայներով աշխատում էին երկինք հասցնել ա՛յն աղաչանքների մումնջոցը, որ լսելի չէր, բայց որ բոլորում էր գիւղացիների ու նրանց վշտի թարգման Տեր-Սիմօնի ամբողջ եռփունից...

Բոմբիւններն աւելի յանախակի սկսեցին կրկնուել, իսկ անձրեւի կաթիլները դեռ չէին մանրանում, ընդհակառակն՝ է՛լ էին խոռորանում. փրկութիւնը, քանի գնում, աւելի էր անյուսալի դառնում, եւ գիւղը դողում էր, սարսափով բրնունում:

— Ա՛ն՝ն՝ն՝ն՝...— որոտաց երկինքը. կայծակը բնդաց... մե՛կ էլ... նորի՛ց... տա՛հ-տա՛հ... ժխոր ու շփոթ բռնեց չորս կողմը. նորի՛ց որոտոց, կրկին ու կրկին կայծակներ, մեկը միսից անեղ. եւ անհա՛ բարձրի քառսից սկզբում հաս-հաս, ապա անընդհատ ու անթիւ՝ սկսեց վար թափուել այն, ինչից որ դողում, սոսկում էր գիւղը...

Մի քանի տրտններից ծվկոցներ բարձրացան. կանայք յուսակտուր, ձնկներին սկսեցին ձեծել, երեխաները բնութեան

արհաւիրքից դողալով, կծկուեցին անկիւններում, տղամարդիկ բքացած՝ էլ արդէն ոչինչ չգտալով՝ աչքերնին էին նայապացնում:

Տեր-Սիմօնն էր միայն, որ իրան դեռ չէր կորցրել եւ լի հաւատով ու բոլոր արբերին օգնութեան կանչելով՝ բաց չէր բողնում թակը եւ զարկում էր, զարկում զանգակները...

Քումասամին քշուած, ցեխտուած՝ հասաւ Մեծ-Տափին, կանգնեց ընկուզենու տակ, նայեց արտին ու սիրտը կրծկուեց, կուչ եկաւ.— մի ժամ յետոյ ի՛նչ կը լինի, արդե՛օ՛հ...— մտածեց նա, եւ հեկց այդ մտում, կարկտի առաջին հասիկը շումփալով զարկեց ընկուզենու տերեւներին: Քումասամին տանջուող հոգու մի խուլ տնտոցով նստեց ծառի տակ, իր արտի մահը սեփական աչքերով չտեսնելու համար՝ աչքերը փակեց, գլուխը կոտտացած ձեռների մեջն առաւ ու անշարժացաւ. կարծես քնեց, կամ քմեց:

Դարձեալ անտառի կողմից մի ձայն տարածուեց, որ լեռներից վար նետուող հեղեղի վշտոցի էր նմանում. եկաւ այդ վշտոցը, մտտեցաւ. եւ քանի մտտեցաւ, այնքան էլ ուժեղացաւ, ինչպէս մի կատաղի ոռնոց:

Լսեց այդ ձայնը քանիսն, լսեցին գիւղացիներից տատերը. ոմանք կուչ եկան, աւելի հասակաւորները լարեցին ականչնին, իսկ Տեր-Սիմօնը կռնեւում ուժի նոր հոտանք գտալով, աւելի թափով ու աշխոյժով զարկեց զանգակներին:

Անյայտ վշտոցը եկաւ, հասաւ գիւղին մեծ արագութեամբ. զարկեց, անցաւ դաշտը, նոյն արագութեամբ հեռացաւ ներքեւ ու ներքեւ: Եւ երբ նրա ձայնը խլացաւ, կարկուտն էլ կրտուեց:

Քամին էր այդ, որ եկաւ, ցրեց ամպերը, քեց կարկուտը:

Տիրեց զարմանալի խաղաղութիւն. կարծես մի քանի տոպէ առաջ չէր, որ տարերքը խառնուած միմեանց՝ երկինք ու երկիր լցրել էին անեղազին բնդիւններով:

Քումասամին, որ վշտի ծանրութիւնից ինքնամոռաց դրութեան մեջ էր, յանկարծակի վրայ հասած լուսիւնից ու ռաբերուելով՝ գլուխը բարձրացրեց ձեռներից ու նայեց չորս

կողմը: Երկինքը պարզում էր. ամպերը փառուել, կարկուտը դադարել, իսկ հրաժարի մահուր օդի մեջ, արեգակի հակառակ կողմը ծիածանն էր կամար կապել երփներանգ ու ծպսուն:

Իսկ արժար...

Թումաս-ամին իր հասակին չհամապատասխանող մի սուր բռնիչով պոկուեց սեղից եւ առաջ անցաւ: Արք կանգուն էր, հասցրած վնասն՝ աննկատելի... Ասուած խնայել էր:

Որքան էլ գլխովը չար ու բարի անցած, որքան էլ բնութեան պատահարներին սովորած՝ երբ Թումաս-ամին նայեց Մեծ-Տափին ու ծփացող արք սեաւ գրեթէ անվնաս, իրան պահել չկարողացաւ. մի բան ներքեւից սողալով, եկաւ, դեմ առաւ Թումաս-ամու կոկորդին, եւ ընկուզեցնու սերեւներից ծորացող անձրեւի շիբերի պէս՝ նրա աչքերից դուրս ցայտեցին արսպուտի կաթիլներն, իրանց հետ բերելով մի աննկարագրելի ժպիտ...

Շնորհակալութեան արտասուք, շնորհակալութեան ժպիտ...

### VIII

Վսանգն անցաւ: Արեւն ազատուեցին այս անգամ, բայց գիւղացիք դեռ անհանգիստ էին. ո՛վ գիտէ, դեռ ինչե՛ր կարող էին պատահել. Սիպսակ-Սարն իր սեղն էր, եւ կարկաբեր ամպերի ժամանակը դեռ չէր անցել: Վախուորում արտատրեւն ամեն առաւօտ, ամեն իրիկուն, նոյն իսկ գիշերն արքնացած ժամանակ երկնի բոլոր կողմերն էին կննում, զննում եւ ուրախանում, երբ կասկածելի բան չէին գտնում այնտեղ: Ամեն օր բոլորի բերաններում աղաչանք-պաղատանք կար ուղղած սրբերին եւ անպահոյն աղօթքներ՝ առ Ասուած:

Սյդպէս յուզումնալից օրերն անցնում էին միմեանց յետեւից եւ իւրաքանչիւր անցած օր ուրախացնում էր գիւղացիներին, որովհետեւ օրն անցնելուց՝ նպատակն էր մօտենում. իսկ ցանֆտերը հետզհետէ հասունանում էին, եւ վերջապէս եկաւ ժամանակը, երբ արեւը վաղանած, դեղին, լիքը հասկերով խժխժացին դաշտերում:

Հնձուորները մանգաղին սրած՝ արեւը մտան:

Թումաս-ամին եւս խռովայոյց արժար՝ ամեն օր այցելութեան էր գնում արժին. նա է՛լ էր վախենում երկնից եւ, քեէ ցոյց չէր տալիս, բայց գաղտնի անհամբերութեամբ՝ հունձն սկսելու օրն էր գուրգուրում իր մտում:

Մի օր նա իր սովորական դարձած պտոյտը կատարեց Մեծ-Տափի չորս կողմով, յետոյ արք մտաւ. որպէսզի ո՛չ մի ցողուն չվնասէ, զգուշաւոր շարժումներով անցկացաւ զանազան ուղղութեամբ ու գտաւ, որ ցորենն այժմ կատարելապէս հասունացել է, ու հենց վաղուանից հարկաւոր է գործի դիմել: Գոհ ու երջանիկ, մի հասկ պոկեց, տրեւց արմու, ու հաշուեց հասիկները. ուղիղ յիսուն ու երկու հաս էին՝ վարդափայլն, չաղ-չաղ, եւ, որ զլխաւորն է՝ ջուխտ էին. նշան չաջողութեան:

— Պահ-պահ... Թումաս-ամին մտաւ լինի ձեր ռանգին. ես որքան չա՛ղ եմ,—ասաց Թումաս-ամին եւ ծիծաղեց երեխայական ջինջ ծիծաղով:

Արեւը տաք էր, ընկուզեցնու սակր՝ հով: Թումաս-ամին եկաւ, իր սովորական, սիրագեղ հայտացով նայեց ծառին ու նստեց նրա տարածած քանձր շուրտում, նախօրօք ցորենի հասիկները գրպանում տեղաւորելով: Ամարային այդ շոգին, ընկուզեցնու սակի հովը մի երկնային զանձ էր Թումաս-ամու համար, եւ նա չուխան հանելով՝ ծալեց ու վրան կոթեց:

Դաշտի այս ու այն կողմից երբեմն հնձուորների աշխարհքերով բացականչուրիւններն էին տարածուած, երբեմն էլ՝ նրանց արտից-արտ արած գոյցների ձայնը: Թումաս-ամու աչքի առաջ, Մեծ-Տափի արժն էր ծովածաւալ ծածանում, իսկ երկնում, մեկ-մեկ՝ լեռներից այդ կողմերն անցած բազմներն էին անվերջ շրջաններ կազմում վերելում: Մի բարակ գեփիւռ, որտեղից-որտեղ, բարձրացաւ դաշտի մի ծայրից, արեւն իրար տալով հասաւ ընկուզեցնուն, եւ նրա սերեւները սլալացին անուշ սօսափունով:

Հողի մարդը, իր հողի վրայ, բնութեան ծոցում. վերացած՝ բուլացաւ, մեղկացաւ, կամաց-կամաց սկսեց ննջել, եւ

սեսնելով, որ Քուր շաղթում է, չուխան փոեց, փափախը դրեց գլխասակին ու քնեց մի խաղաղ, հանգիստ քնով:

Երեւի քունը երկար էր սեւել, որովհետեւ երբ արքնացաւ, ընկուզեցնու շուաքի բաւական ձգուել էր ներքեւ: Թումաս-ամին չգարմացաւ դրա վրայ, որովհետեւ պատահել էր, որ դրանից է՛լ աւելի երկար էր քնել ու հանգստացել իր Փանփոկի շուաքում. բայց նա գարմացաւ, երբ ծառի բնի մօտ Գասպարին տեսաւ, գլուխը դրած քեւին ու քաղցր քնած:

— Պա՛յ քեզ մասաղ, բալա-ջան...—գգուանում խօսեց Թումաս-ամին ու ծիծաղեց գսպուած ծիծաղով.—երեխա եկել է ու քնել, իսկ ես չեմ իմացել:

Ապա վեր կացաւ, չուխան վերցրեց, մօտեցաւ Գասպարին ու հանդարտութեամբ ծածկեց նրան. բայց որքան էլ շարժումներն զգոյ՛ւ՝ այնուամենայնիւ, չուխայի հպումից Գասպարն արքնացաւ, ձգուեց, ձգձգուեց, սկզբում չիմանալով քե որտեղ է գտնուում, քնկոտ հայեացքով նայեց այս ու այն կողմ, ու նոր միայն սրափուելով՝ վեր բռաւ, նստեց, իր պատահական դեմքին մի ժպիտ խաղաղանելով:

— Ե՛րբ ես եկել, մասաղ,—խանդաղասանում հարցրեց Թումաս-ամին:

— Շատ ժամանակ է,—պատասխանեց Գասպարը.—երբ եկայ, շուաքի ծառի սակին դեռ բոլորած էր:

— Ախր դու բաղումն էիր. մեծ առուն պէտք է մաքրէիր:

— Մաքրել, վերջացրել եմ, ամի՛, — հպարտ-հպարտ կանչեց Գասպարը:

— Բա ինչո՞ւ ես եկել:

— Դու այստեղ էիր, նրա համար... համ էլ ասեցի, գնամ, տեսնեմ արքը վաղանե՞լ է... սիրես ուզում էր. մի շաբաթ կայ, որ չեմ տեսել:

Թումաս-ամին գմայլանում նայեց բոռանը: Գասպարն է՛լ էր սիրում հողը, նա է՛լ էր հետաքրքրուում արքով. իսկ այդ մխիթարական էր պապի համար.—երբ ես չեմ լինի, բողնում եմ որդիք ու բոռներ, որոնք նոյնպէս կը շարունակեն հողը մեակել, հերկել ու ցանել, նոյնպէս կը կատարեն այն ասուա-

ձային գործն, ինչպէս ես՝ իմ ամբողջ կեանքում,—մտածեց Թումաս-ամին եւ բոռանը գիրկն առնելով, պաչեց ու ասաց:

— Լաւ ես արել, ամին քեզ մասաղ. սիրիր Մեծ-Տափը, որ նա էլ քեզ սիրի... Երբ ես էլ քո չափ փոքր էի, հայրս այդ նոյն խրատն ինձ տուեց. եւ ես, քեւ փոքր էի, բայց հասկացայ նրան, ասածները կատարեցի ու բախտաւոր եղայ. հիմա էլ դո՛ւ ինձ լսիր, որ բախտաւոր լինես — Թումաս-ամին լուեց, խորհուն դեմքով նայեց դաշին, եւ ձեռքը Գասպարի գլխին դնելով, շարունակեց:—Հողի հետ գործ ունեցողը իրա գլխի տերն է, վիզ չի ծռում մարդկանց մօտ. ոչ անձեւ է խնդրում նրանցից, ոչ արեւ. նա միայն Աստուծոն է նանաչում: Աշխատանքից չվախեցնաս, քե չէ՛ հողը քը խոռովի քեզանից եւ ապրուստ չի տայ. երբ մասներիդ կոտոր դուրս գան ու մորթը նախնուի՝ չափսոսաս, չտրտուես. այդպիսի ձեռներով վասակած հացն է, որ հալոյ է. եւ ընդհակառակը՝ եթէ ուրիշ չարչարուողի ձեռքի հացից քե՛կուզ մի քիֆէ խլես, հարաւ է, որովհետեւ այն քո աշխատանքի չէ, քո քրտնից արդիւնք չէ: Ազան չլինի՛ս: Տեսնո՞ւմ ես ինձ. վաքսուցնեմք սարեկան եմ, միտ աշխատել եմ, միտ քրտնել, շատե՛րն են եկել, իմ քրտնես չափել ու տրել, բայց էլի ի՛մ երես է պարզ, ի՛մ խիղճ է մաքուր, եւ յոյս ունիմ, որ պարզերես Աստու առաջը դուրս գամ. դու էլ արա՛ այն, ինչ որ ես եմ արել... Լսո՞ւմ ես, բալա-ջան:

— Լսում եմ, ամի,—սպաւորում արքով պատասխանեց Գասպարը:

— Հա, քեզ մասաղ. լսիր, եւ մի՛ մոռացիր: Իսկ այժմ գնանք տուն, որ պատրաստենք վաղն առաւօտեան հունձն սկսելու:

## IX

Հետեւեալ առաւօտը ծեղր դեռ նոր բացուած՝ Թումաս-ամին իր որդիներով ու աշխատանքի հասած չորս մեծ բոռներով, Մեծ-Տափի ընկուզեցնու սակ էր գտնուում: Օդը բարձր էր, զով ու տրամադրող դեպի գործ, բայց երկնքի պարզու-

քիւնից ու վաղորդեան հովի բացակայութիւնից երեւում էր, որ օրք տաք է լինելու, այնպէս, ինչպէս սովորաբար տաք է լինում ամառն, արեւուն:

Քումաս-ամին ջանել մարդու արագ ու վստահ շարժումով հանեց չուխան ու արխալուլը, հագին բողներով միայն կապոյտ ներկած, դադաքե շապիկը. նոյնպիսի կապոյտ գոյնով քաշկինակի երկու ձայրերը յետեւից վրայ բերելով, պնդացրեց նակաշին քեթեւ հանգոյցով, կաշուէ զոգնոցը կապեց, լորենու չոր փայտից շինած կեռ մասնոցներն անց կացրեց ձախ ձեռքի մասներին ու մանգաղը վերցնելով, դարձաւ իւրայիններին:

— Ամին ձեզ մասաղ, կսոր սուրբ օր է, արներդ մաքուր մեք արքը. ամեն մի հասկը, որ կտրելու էք, լաւ իմացեք, որ Աստու սուածն է. ինչ որ էստեղից ստանանք, Աստուց ենք ստանում եւ ոչ մարդկանցից, իսկ ինչ որ Աստու ձեռքից ենք ստանում, սուրբ է. դրա համար եմ ասում, քե՛ արներդ մաքուր մեք արքը, եւ չտրեցեք, եք յոգնեք. ընդհակառակն՝ ուրախացեք, երբ որ ֆրսնեք. միշտ ասել եմ եւ մինչեւ մեռնելու օրս պեք է շարունակ կրկնեմ, որ առանց ֆրսինքի հացը հալալ չէ... Դէ, ձեզ մասաղ, Աստու անունը կանչեցեք եւ սկսեմք:

Քոռներից մեկը, որ պակասաւանով ականջ էր դնում պապին, մի տանուր տարեկան պատանի, կանչեց:

— Ամի, դու հերկել ես, ցանել, ամբողջ տարին չարչարուել, քո՛ղ հնձելն էլ մնայ մեզ. կհասցնենք, շատուր ենք:

Քումաս-ամին զգացուեց բռնան հոգատարութիւնից:

— Մասաղ լինիմ իմ խղճմանով, խելօք բալիս, — ասաց նա. — չէ, բալա-ջան, սխալում ես. ես չեմ չարչարուել, այլ աշխատել եմ. եւ եք չաշխատեմ, կը հիւանդանամ... ա՛յ, երբ որ դու էլ, Աստուած պանի, իմ չափ մեծանաս, են վախճը կը տեսնես, որ ամին ուղիղ էր ասում:

Վերջացրեց Քումաս-ամին, մօտեցաւ արքին, — «Յիսուս-Քրիստոս, Դո՛ւ մեզ օգնես» — մրմնջաց եւ մասնոցներով զինած ձախ ձեռքով հասկերի մի փունջ նանկելով, աջով մանգաղի բերանն առաւ:

Այդ բապէին Քումաս-ամուն համակել էր նոյն զգացման հետ, ինչ որ ամիսներ առաջ, սերմը գցելիս. — հանդիսաւորութիւն, կրօնական խորհրդաւորութիւն, կատարած գործի վստահեան գիտակցութիւն... Մեղմով խելացոյց ցորենի իւրաքանչիւր դեղնագոյն փունջը ձեռքը հաւաքելիս, հրեւանքից ուռչում էր նրա սիրքը: Նա տեսնում էր, որ ամիսներ առաջ հողին յանձնած յոյսերն այժմ բեղմնաւորուած, պակուել են լի ու լի: Նա մի առ մի վերջիւում էր իր կրած հոգեկան ապրումներն սկսած այն խորհրդաւոր օրից, երբ ինքն առաջին ակօսն անցաւ իր եզներով Մեծ-Տափի վրայ, մինչեւ այսօր, երբ, ահա՛ մանգաղը ձեռքին, իր քափած ջանքերի արդիւնքն էր հաւանում: Նա հպարտանում էր իր կատարած գործով. ուրիշի աշխատանքը չէ, որ անարդար կերպով նա պեք է վալելի, այլ իր սեփական. — ինքն է ցանել, ինքն է հերկել, ինքն է ուրախացել, երբ հողին պահ տուած սերմերի ծլելն է տեսել, ինքն է դողացել, երբ ամպերը պատել են երկինքը, եւ ինքն է դարձեալ, որ այժմ ահա՛, ֆրսինքը նակասին, վարսունունիկը երկար ու ձիգ տարիները մեջքին շալակած, աշխատանքի կոտորով զարդարուած ձեռքին մանգաղը բռնած՝ իր հալալ աշխատանքի պակն է հիւսում Մեծ-Տափի կրծքին: Եւ այդպիսի հոգեպարար խոսերով տարուած՝ Քումաս-ամին չէր զգում. քե մի կոպիտ, յոգնեցնող գործ է կատարում, այլ խորապէս համոզուած էր, որ ինքը, Մեծ-Տափը, մանգաղն ու հասկերը հոգեպէս շողկապուած իրար հետ, մի օրգանական ամբողջութիւն են կազմում, որ մանգաղը ոչինչ է առանց Մեծ-Տափի, Մեծ-Տափն՝ առանց հասկերի, եւ դրանցից իւրաքանչիւրն առանձին-առանձին նոյնն են զգում ու մտածում, ինչ որ ինքը՝ Քումաս-ամին:

Արեւը փոքր առ փոքր բարձրանալով, այժմ իր նառագայքներով աւելի ուղիղ էր նայում երկրին, եւ ամառային արեգակին յատուկ այրող ջերմութեամբ՝ վառում էր դաշքը: Մեծ-Տափի հնձուորներն ու սերնին դեմ արած արեւին, ֆրսինքի մեջ կտրած, առանց հանգստանալու, մեքենայացած, իրանց դժուարին գործն էին առաջ տանում. նրանցից մեկն ու մեկը

երբեմն կանգնում եր վայրկենաչափ, ուժերն աւելացնելու համար լիարտ շունչ փառում, նակասի ֆրսիներ մասով ծլլացնում, ու կռանալով, նորից շարժում մանգաղը: Իսկ ընկուզեմին արտի վերելի ծայրում կանգնած, մի կաշառող, հովասուն շուտ եր սարածել սակր. բայց ո՞ւմ կարող եր նա գրաւել այդ ժամին իր սփանչելի շուտով, ֆանի որ արեւն եր օրուայ տեր, եւ ֆրսիներ՝ գործի վնողը:

Մասաղ հնձուորներից մեկը ձեռքին գտնուող հասկերի փունջը ծղոտով ձեղպաս սալով դրեց գետնին, գոզնոցի բուլացող կապերը պնդացրեց գօտկասեղում եւ աչքը գցելով ընկուզեմուն, անձկութեամբ նայեց նրա քանձը շուտին:

Փումաս-ամին նկատեց քոռան հայեացքը, ժպտաց իր արձում, ու, քե՛ր քոռան ինքնասիրութիւնը չվիրաւորելու եւ քե՛ր նրա դեպի շուտին զգացած ցանկութեանը քեկուզ մի ֆանի բուպեով յագուրդ սալու համար, կանչեց:

— Բարա-չան, ֆեզ մասաղ, մանգաղդ մի բեր, տեսնեմ:

Փոռը մօտ վազեց:

Փումաս-ամին առաւ նրա ձեռքից մանգաղը, զննեց չորս կողմից ու ասաց:

— Բա՛... ասամները բոլորովին ֆոռացել են. սրանով հնձել չի կարելի, կոներ կը փերի... վազիր, մասաղ, ընկուզեմուն սակ նսիր, գրպանումս մի փոքրիկ խարսոց կայ. հանիր ու մանգաղդ մի լա՛ւ արիր:

Փոռը լսեց պապի ասածները, մի ֆիչ կանգնեց, բայց իր պասանեկան հոգով զգաց նրա գաղտնի միտքը. մանգաղը նոր եր, ասամներ՝ սուր. պապը հանգստանալու եր ուղարկում:

— Չե, ամի, կարծում ես, յոզնե՞լ եմ. չեմ յոզնել, միայն ֆրսիներն է մի ֆիչ նեղացնում, մեկ էլ հասկերի սուր-սուր ֆրսերը, որ երբեմն դօշու են ընկնում, — վրայ բերեց նա, եւ որպէսզի ապացուցի, քե, իսկապէս չի յոզնել. յէս վազեց իր տեղն ու աւելի՛ բափով մանգաղը գործի դրեց:

Դաշաւայրում օդը շեռուցած հնոցի նման սկսեց հուր-հրասել. հողմաղացները, որ երբեմն-երբեմն երկնում երեւա-

լով, կանգ էին առնում, բեւերին քափ սալիս, նրանք էլ փախան դեպի ծայրերի ձեղպերը կամ բլուրների կասարները, այնտեղ խաղացող զեփիւռ նարելու. դաշտերը մնացին ծոյլ, դանդաղաշարժ կանաչ մարեխներին ու հնձուորներին, որ սապից խառուելով, միանգամայն ֆրսնողող եղած, կենտրոնացած՝ շարունակում էին հնձել, սակայն առանց ձայն-ձայնուն հանելու. ոչ ժամանակ կար, ոչ էլ ախորժակ՝ մի խօսք խօսելու: Միայն Փումաս-ամին եր, որ որքան էլ ֆրսնած, մեջքը ցաւելիս, որքան էլ քիկուկն ու ուսերը արելից դաղուելիս՝ գոհութեամբ փառք եր սալիս Աստուն, որ այդպէս միտք իր ժամանակին բարիք է հասցնում, գործաւորների չարչարանքն արդիւնաւորելու. աշտներ, հերկի ժամանակ անձրեւ ու մեզ՝ հողը փխրուն դարձնելու, ձմեռը ձիւն՝ ձիւրեր ցրեց ապահովելու, գարնանն անձրեւ՝ արտերը ջրելու, իսկ այժմ, ամառը կրակի պէս արեւ՝ հունձը, խուրձերը չորացնելու, որպէսզի կալում հեշտութեամբ ձեծուին: Եւ այդ բոլորը հոգում եր բնութիւնը. ինչպէ՛ս տեսնուա՛լ...

Կեսօրին ֆիչ մնացած, ուրախ բացականութիւններով, հարալ-հրոցով՝ զիւղից ծայր տուն մի խումբ կանայք ու երեխաներ, կապուցներով բեռնաւորուած. հնձուորների համար հաց էին տանում: Միմեանց բոսբոսելով, բարձր քրտնոցներով նրանք հասան դաշտի բերնին, այդտեղից բաժանուելով փոքրիկ խմբակների, զանազան ուղղութիւններ վերցրին, իսկ չորս հոգի ձուռեցին դեպի Մեծ-Տափը:

Փոռներից մեկը գրեթէ բուլացել եր, բայց ինքնասիրութիւնը բոլ չեր սալիս, որ մանգաղը դնէ գետնին եւ աւտ. — էլ չեմ կարող, — այլ ուժերի վերջին բեկորները հաւաքած՝ առաջանում եր, բերանը լայն բաց անելով, որ աւելի շատ օդ կարողանայ ներս ընդունել, քեւ տափ ու հեղձուկ եր օդը: Բայց ահա՛ նա նկատեց հաց բերողներին. նրա սիրքը բնական արագ ու արագ եւ գերազույն հրճուանքի մի փայլ խաղաց երեւին:

Միւսներն էլ տեսան հաց բերողներին ու նոյնպէս հրճուեցին, որովհետեւ իրանք էլ էին յոզնած, բեզարած. արեւը ֆամել եր նրանց, ուժաքափ արել:



— Մեծ-Տափը ձեզնից իրա բաժին ֆրսիճն է ուզում, բայի՛ք-զան, —ասաց նա.— սարեք, կժերը ջրով լցրեք, յետոյ եկեք, մեճն հնձեճն, իսկ դուք խուրձեր կապեցեք եւ դիւ-դիւ դրեք, որ աւելի լա՛ւ չորանան:

Հարսներն ու երեխաները արագ շարժումով վերցրին ջրի մեծ ու փոքր կժերը եւ դեպի աղբիւր վազեցին, իսկ Քումաս-ամին իւրայիններով դիմեց դեպի արս, հունձը շարունակելու:

## X

Հունձը վերջացաւ: Գաւթերը մերկացան ֆիչ առաջ նրանց վաղ նազանքով ծածանուող արտերից, եւ մի ֆանի ժամանակից յետոյ, գիւղացիք խուրձերն արդէն կալերը հաւաքած՝ մեծ աշխատանքի վերջին գործողութեանը ձեռնարկեցին:

Քումաս-ամին կազմ ու պարտաս՝ իր դերի մեջ մտաւ:

Ամեն սարի, կալը կատելիս, ինչպէս գիւղացիներից շատերը, Քումաս-ամին նոյնպէս գիշերները տուն չէր գնում, այլ մնում էր դաշտում, մանաւանդ որ կալը գրեթէ կապած էր գիւղին: Մի փոքրիկ, անշուք վրան սարքած՝ այնտեղ էր ապրում իր տան անդամներից մի ֆանիսի հետ, մինչեւ կալի վերջանալը: Եւ այժմ էլ, չնայելով որ կալը դեռ բաց չէր արել, արդէն երեք օր էր, որ Գասպարի հետ այնտեղ էր գտնուում, ցորենի դեզերի մօտ, Գասպարը վրանում, իսկ ինքը՝ բաց երկնքի տակ:

Չորրորդ օրը մահակով չխկչխկացրեց կալին ու կանչեց Գասպարին:

— Բալա-զան, կալը պնդել է. գնա տուն, ազուն ասա, որ իրիկունս բոլորը հաւաքուեն կալը. վաղն առաւօտեան պէտք է սկսենք կատելը:

— Ամի, բողնելո՞ւ ես, որ ես էլ ֆամեմ, — խնդրողական ձայնով հարցրեց Գասպարը:

— Թողնելու եմ. բա՛ւ. ժամանակն է արդէն, որ ամեն բան սովորես:

Գասպարն ուրախացած՝ բռաւ դեպի գիւղը:

Հետեւեալ օրը, երբ լոյս աստիճան աղօսացաւ. իսկ արեւելում ձեզը բացուելու նշանները երեւացին, Քումաս-ամին բարձրացաւ տեղից, երեսը լուաց, շնորհակալութեամբ լի հայեացքը գցեց երկնքին, իր իմացած աղօթքը արտասանեց ջերմեանդութեամբ եւ շուտ գալով՝ մօտեցաւ դեռ եւս ֆնած օգնականներին:

— Վեր կացեք, ձեզ մասաղ, — կանչեց նա.— վեր կացեք, սկսենք. ժամանակն է:

Ապա մօտեցաւ ցորենի դեզին, վերցրեց մի խուրձ ու ֆաշելով կալի մեջ, կանգնեցրեց կորերի վրայ, հասկերը դեպի երկնք.— Էս Աստուծո՛ւ, —ասաց նա: Յետոյ ֆաշեց մի ուրիշ խուրձ, կանգնեցրեց երկրորդի կողքին.— Է՛ս էլ բազաւորին: Յետոյ բերեց երրորդ խուրձն ու կանգնեցրեց առաջինների շարքում.— Է՛ս էլ չունեւորներին: Ապա միմեանց յետեից ֆաշեց դեպի կալն ուրիշ նոր խուրձեր, անունները տալով՝ թէ ս՛ւմ համար է նուիրաբերում.— Է՛ս էլ ժամերին. Է՛ս էլ երկնքի բռնուններին, Է՛ս էլ դօնադին, դուրսը մնացածին...

Երբ ֆիլացող գգացմունքներով այդպէս բոլորին բաժին հանեց, Քումաս-ամին պայծառացած՝ ձայն տուեց:

— Դե, բա՛ց արեք կալը, ամին ձեզ մասաղ... ֆաշեցեք խուրձերը. ֆառատունից պակաս չլինի՛. ցօղունները չոր են, կը հաւցենք:

Ամենից առաջ, ուրախ բացականչութեամբ՝ Գասպարը վրայ պրձաւ, մի խուրձ գրկեց իրանից մեծ ու նետեց կալի մեջ: Նրա բնկերները նոյնպէս հասան, եւ ժուրքեամբ մի ֆանի բոպեւում ներս ֆաշեցին պահանջուող ֆանակալութեամբ խուրձերը, իսկ Քումաս-ամին, երկու հոգու հետ կտրելով խուրձերը գրկող կապերը, կալը ծածկեց տարածած հասկերի հաւասար շերտով:

Քիչ յետոյ խումարն ու Աբուաբը մի գոյգ, Սարօն ու Ծաղիկն էլ երկրորդ գոյգը, տակից սուր կայծաքներով զինած երկու կամն էին պստեցնում կալում: Եզները չաղ էին ու ամիսների բնրացում կատարելապէս հանգստացած, իսկ խուրձերը՝ բոլորովին չոր. մի ժամու չափ պտոյներ անելուց յետոյ,

կամներն իրանց գործը սեսան, եւ ցօղունները բաւականա-  
չափ ծեծուեցին, կտոր-կտոր դառան:

Քումաս-ամին եղանք ձեռքին՝ հասկերն եւ շուռ սալիս  
եւ սիրով լի աչքերով՝ եզների պոսոյներին հետեւում: Եզներից  
մեկն ու մեկը երբեմն կռանում եւ, հասկերից լիաբերան նան-  
կում ու սկսում ծամել: Քումաս-ամին ժպտալով նայում եւ  
նրա ծնօսների շարժուելուն, եւ երբ ազին դժգոհում եւ, որ  
եզները ցորենն ուտում են, սիրտը նեղանում եւ կնոջ յայտնած  
դժգոհութիւնից, ու դառնում եւ նրան:

— Աստուած լսում է ասածներդ. Սարվա՛գեցն աղջիկ,  
մեղք ես գործում... չգիտես, որ «կալումն աշխատող եզան  
դունչը չեն կապի». բա որ դրանք չուտեն, ո՞վ ուտի. չե՞ որ  
իրանց հալալ աշխատանքն են ուտում:

Ազին ամաչում եւ ու լուռ, մարդու բարոյախօսութեան  
դէմ առարկելու ոչինչ չունենալով:

Արեւը բարձրանալով՝ կալ կասողներին իր ոյժը ցոյց  
տուեց. ֆրսիները դարձեալ ու դարձեալ սկսեց ծորալ աշխա-  
տարների նակասներից. բայց մի կողմից արեւը երբ վառում  
եւ, միւս կողմից էլ մեծապէս օգնում եւ կալուորներին, ցօ-  
ղունները կասարելապէս չորացնելով:

Կալը մօտենում եւ «դուրս գալուն». Քումաս-ամին եղանք  
մի կողմ դրած՝ այժմ քիակով եւ շուռ սալիս մանրացած ցօ-  
ղունները. իսկ մի ժամ յետոյ, դեռ կեսօր չեղած՝ կալը վեր-  
ջացաւ:

Եզները լծից ազատելով, բաց բողեցին արածելու, յար-  
դախառն ցորենը հաւաքեցին կալի մեջ տեղը, եւ այդ երկար  
կոյսի մի կողմին Քումաս-ամին կանգնելով, միւս կողմին մեծ  
որդին՝ ֆամելիները վերցրին:

Կարծես վաղօրօք պատրաստած՝ մի բարակ, շոյող ֆամի  
բարձրացաւ: Քումաս-ամին զուարթ դեմքով, ուրախ արտով՝  
յարդի ու ցորենի խառնուրդից ֆամելու բերանն առնելով՝  
չարտեց բարձր. ֆամին քեքեւ յարդը ֆեց կալի մի կողմը, իսկ  
ցորենը խժաւալով քափեց կալի մեջ:

Մեծուած խուրձերի կոյսը հետզհետեւ հալուեց ֆամելիների

ջանքերից, եւ հասաւ ժամանակը, որ կալի մի կողմում յարդը  
դիզացաւ, իսկ մեջ տեղը՝ վարդագոյն ցորենի մի պատկառելի  
կոյս:

Քումաս-ամին էլ չէր խօսում, այլ, հոգու սրամազրու-  
քիւնը դեմքին դրոշմուած, ցորենից մի բուռը վերցրեց եւ  
նայեց երկար: Մի ձայն այդ բուռից, կարծես երկնից, շենջաց  
նրա ախանջին.

— «Բն ֆրսիներդ է այդ, որ մարմնաւորուել, դիզուել է  
կալում. ուրիշներ չէ, այլ սեփական աշխատանք, եւ Աստու-  
ած այդ հալալ է անում քեզ»:

## XI

Գիւղացիք յոգնել էին. ամարային երկարատեւ, ծանր  
աշխատանքը, հունձն ու կալը, խառնող արեւը նրանց ֆամել,  
փօրել էին. շատերի երեսի մորթը շոյից խորխահան եւ եղել.  
Եւ միայն գիշերուայ հովը, ֆլաւն աղբիւրների պաղ ջուրն ու  
գարմանալի ախորժակով ուտելն եւ, որ նրանց ոյժ եւ սալիս  
տակալու:

Յոգնել եւ է՛ր Քումաս-ամին. նա գօտկատեղում ցաւեր  
եւ զգում, իսկ իրիկունները, երբ գործից յետ եւ դառնում,  
մծմծում էին թեւերն ու ուտերը. բայց նա ամենեւին չէր գան-  
գատում, ընդունելով, որ այդ ուրիշ տեսակ էլ լինել չի կա-  
րող. եւ չպատահեց մի օր, նոր ռա բերնից մի շար խօսք դուրս  
գար, չպատահեց մի օր, որ նրա երեսին չբրբար այն վնիս,  
գրեթէ մանկական անմեղ ժպիտը, որ այնքա՛ն սազ եւ գալիս  
նրա բարի դեմքին: Իսկ այժմ գանգատուելու խօ՛ր բոլորովին  
առիք չունէր, որովհետեւ միայն վերջին կալն եւ մնացել, որ  
վաղը պէտք է վերջանար, եւ որին պիտի յաջորդէին հանգստա-  
նալու երկար շաբաթները:

Տարին առաս եւ. աւելի, ֆան առաս: Քումաս-ամին  
ցորնով լցրել եւ ամբարը, սակառները, «բայշաները», նոյն  
իսկ՝ գինու դասարկ կարասները, եւ էլ տեղ չունենալով, «դա-  
րադամի» մի անկիւնում եւ քափել մնացածը, մինչեւ որ յե-  
տոյ մի նար կ'անէր:

Գոն եր Թումաս-ամին. եւ երբ նախավերջին կարն էլ վերջացնելով, ցորենի բեռները տուն ուղարկեց, ինքն էլ քնքրեց, եւ մութն ընկնելուց՝ պառկեց կալի կողքին, վրանի առաջ, աչքը գցելով երկնքին: Ինչքան լաւ եր քննաքոր աշխատանքից յետոյ պառկել բաց երկնքի սակ, խաղաղ, հանգիստ, եւ նայել լեռներին, նայել երկնքին...

Հոգեզմայլ դուրսեամբ՝ Թումաս-ամին դեպի մօտակայ այգիները նայեց, որտեղ ծառերն իրանց սաղարքներով հետզհետեւ ձուլուում էին քանձրացող մթութեան հետ: Արեւմուտքում անկարագրելի, տեսողութիւն պարարող գոյներ խառնուեցին իրար: Յանկացաւ հաշուել տեսակներն ու գոյներին անուններ գտնել, բայց չկարողացաւ, այնքան էին երփներանգ. օդը մաքուր,՝ քարմացնող...

Մօտակայ կալում մեկը հազաց երկար ու կոշ: Թումաս-ամին մի քիչ գլուխը վեր բաշտեց ու այն կողմը նայեց. հարեւանն էր, Առսամը, երեւի փունը չէր տեսնում, որովհետեւ պառկած չէր:

Գասպարը, որ վերջին օրերս շոգից զանգատուելով՝ վրանում մնել չէր ուզում, եւ այժմ պապի մօտ էր պառկած, կտակ վրայ, շուռ ու մուռ եկաւ եւ հին ետփնջին գցեց վրայից. — քալաս կը մտի, — ինքն իրան ասաց Թումաս-ամին, ձեռքը մեկնելով՝ ետփնջին բաշտեց Գասպարի վրայ, եւ երբ նորից ցանկացաւ տեղը սագացնել, մօտակայ ոտները փոխուեց լուսնու:

Առսամն էր, յիսունն անցկացրած, քախմադեմ, արեւից այրուած երեսով մի մարդ: Եկաւ, նստեց Թումաս-ամու մօտ, մեջքը յենելով խուրձերից մեկին:

— Մեջքս կտրուում է, փունն չի տեսնում, — ասաց նա. — ասեցի գնամ, մի քիչ գոյց անենք, բալբա մեջքիս ցար մոռանամ:

— Լաւ եւ արել. իմ փունն էլ չի տեսնում, — պատասխանեց Թումաս-ամին, ուրախացած. — Եսպէս գիշերները գոյց անելուց լաւ բան չկայ. գոյցից յետոյ փունն աւելի քաղցր է լինում, — վերջացրեց նա, եւ մի խուրձ էլ իր մօտ բաշտելով՝ յենուեց նրան:

— Հա՛, հիշես ես ասում: Միտս է, երբ... — սկսեց Առսամը, բայց հազը բռնեց, խօսքը կիսատ քողմեց. հազաց երկար, եւ երբ կոկորդը մաքրուեց, շարունակեց՝ ուրիշ բան խօսելով: — Անցեալ օրը բողբոջ «մլոյ» ընկաւ. հիմա ինչքան անում եմ, դուրս չի գալիս, եւ Եսպէս խեղդում է ինձ... ասեցին՝ քունդ մախորկա քաշի, կ'անցնի, — քաշեցի, բայց չանցաւ:

— «Մլոյ» քունդ հագեցնող է լինում, բայց հինգ օրից աւել չի կտրուում. քննա՛ն եմ ընկել...

— Հազը ոչինչ. իհարկէ, կ'անցնի. բայց մեջքիս ցար... ես անտէր հունձը, կալը հոգիս հանեց, պրծաւ... Եսպէս քրտնեմ կը լինի, Եսպէս տանջա՞նք կը լինի...

— Տանջանք որի՞ն ես ասում, Առսամ:

— Մեր կատարած աշխատանքին... սա ինչի՞նք նման է. մի կտր հացի համար՝ տարին — բոլոր, մասերնիս կտր արած՝ հողն ենք փորփրում, մի քանի տրմ գցում, յետոյ սկսում դողալ, քե՛՛ հիմա մտելը կը գայ, հիմա կարկուտը կը գայ, «փանգիլ» կ'անի... շուրջ չի դիմանայ. բայց մարդու նակասը պիտի է լինում, դիմանում ենք:

Թումաս-ամին քուաց, քե Առսամը սրբապղծութիւն է կատարում, եւ ասաց յանդիմանօրէն:

— Վա՛յ, Առսամ, ինչե՞ր ես ասում... հոգուդ մեղք ես անում. մեր կատարած գործը սուրբ գործ է. մենք Եսպիսի բան չենք անում, որ ուրիշին խաբենք, կամ խաբուենք. մասաղ լինեմ հողին. առանց հողի՛ մի օ՛րս չլինի... ասում ես՝ — քննում ենք, չարչարում ենք. — բայց առանց քննելու, առանց չարչարուելու հողը կը հերկուե՞ր, ցորենն ինքն իրան կը ցանուե՞ր, կը հնձուե՞ր...

— Չէ, Թումաս-ամի, ես եղպես չեմ ասում. միայն ասում եմ, քե՛՛ ախ չարչարանքին էլ չափ ու սահման ունի. քե՛՛ չէ՛՛ հեկն ծնուած օրը լուծը վզիդ դնես մինչեւ մահդ... Եղ էլ իսկի մի բանի նման չէ: Նայում եմ չորս կողմս. մարդիկ կան, որ ձեռքները ոչնչի չեն կայցնում, քրտնեմ երես չեն

սեանում, բայց միտս ապրում են լին ու բոլ, քե՞նքեր բեօփ... խանի պես. մենի ինչո՞վ ենք մեղաւոր:

— Քո ասած լին ու բոլ, խանի պես ապրող մարդկանց կեանքին ես հաւան չեմ. նրանք բախտաւոր մարդիկ չեն, որովհետեւ իրանց սեփական աշխատանքով չեն ապրում, իսկ դա Աստուծոն ընդունելի չէ, — մի քիչ ոգեւորուած՝ նկատեց թումաս-ամին:

— Է՛, թումաս-ամին. ստում ես՝ Աստուծոն ընդունելի չէ. — եղ օրէնք մեծակ մե՞զ համար է... Ահա՛ սանջուելով, ծով-ֆրսինք քափելով՝ հերկել եմ, հնձել, կատել, մի քանի բեռ ցորենն տուն հասցրել, որ երեխաներիս կերակրեմ, հապա մի սես քե՛ քանի՛ ձեռք եմ մեկնելու դեպի իմ ֆրսինքից ծնուած այդ մի քանի բեռ... իսկ դա Աստուծոն ընդունելի՞ է:

Թումաս-ամին մի քիչ մտածեց ու ասաց մեղմ, գրեթէ քախճոս ձայնով:

— Չէ, Աստուծոն դա Աստուծոն բոլորովին ընդունելի չէ, որովհետեւ դա անարդար բան է: Իհարկէ, սիրճներս կարող է խոսովուել, որ այդ այդպէս է, բայց աւելի լաւ է քո եղ ցաւող մեջքդ է՛լ ցաւեցնես եւ քո հացդ քո ձեռքովդ աշխատես, քան քե՛ ուրիշի ձեռքով աշխատածն ուսես:

Աստուծոն չպատասխանեց. մի հոգոց հանեց ու հազաց իր կոտս ու երկարատեւ հազով: Տիրեց ժամանակաւոր լուսքին: Աստուծոն խորձի վրայ քիկունք սազացրեց, իսկ թումաս-ամին աչքը գցեց դեպի մութ տարածութիւնը:

Հարք դաճեալայրը, ծածկուած մրութեան կիսաքափանց շղարձով՝ մի անբացատրելի-խորհրդաւոր կերպարանք էր ստացել, որտեղ ոչինչ չէր երեւում, բայց զգացում էր նրա անսահմանութիւնը, նրա խորութիւնը. իսկ վերեւում, միլիոնաւոր պլպլան աստիճանով զարդարուած՝ երկինքն էր իր ծայրերը յենել անտեսանելի սահմաններում:

Երկինքն էր դաճեալայր. երկուսն էլ անհո՛ւն, երկուսն էլ անհասանելի՛, մե՛ծ:

— Ես էլ ստում եմ, դէ որ ետեան սանջուելու ենք, ետեան չարչարուելու ենք, էլ ինչո՞ւ ենք ծնուում... դէ որ մահը

կայ, էլ ինչո՞ւ ենք սանջուում, — գիշերուայ հանդիսաւորութիւնից կարծես քե՛ ննուում՝ շեղաց Աստուծոն:

Թումաս-ամին Աստուծոն ձայնից սրափուելով՝ շարունակելով հոգեզմայր հայեացքով երկինքը դիտել, ոչինչ չստեց, միայն շարունակեց շարժեց, որ, կամ պատասխանն էր խօսակցին ուղղած, կամ աղօթք:

Գասպարը երազում — «տումար» — կանչեց ու ծիծաղեց մի լիակուրծք, կլկլան ծիծաղով:

Թումաս-ամին շուտ եկաւ, անհուն սիրով նայեց բուռնն, ու դեմքը շեղեց, աւելի կուտացաւ դեպի նա:

— Երեխան ծիծաղում է... Եղան հետ երեւի խաղում է. անունը տուեց, — խօսեց Աստուծոն, ինքն էլ ժպտալով:

Թումաս-ամին կուտացած՝ դեռ նայում էր Գասպարին. — բախտ ծիծաղում է, — մտածեց նա. — սիրում է եզներին, ինչպէս ես. սիրում է աշխատել, ինչպէս ես. եւ ինձ նման սիրում է Մեծ-Տափն ու այն բոլորը, ինչ որ ես եմ սիրում, ինչ որ կապուած է հողի հետ... — մտածեց, եւ նրա միտքը կարծես լուսաւորուեց նոր ծագում առնող ինչ-որ ջերմ լուսով:

— Ասում ես՝ «դէ որ մահը կայ, էլ ինչո՞ւ ենք մեռնում», — մեղմ ձայնով ասաց թումաս-ամին, Աստուծոն դառնալով. — մահը չկայ. մենք չենք մեռնում... Ես չեմ մեռնելու:

— Հէ՛, հէ՛, հէ՛... — կամացուկ ծիծաղեց Աստուծոն. — «չեմ մեռնելու»... Ենպէս մեռնես ո՛ր, բողբ էլ չմնայ:

— Չէ՛, չեմ մեռնելու, — այս անգամ դրական կերպով շեղեց թումաս-ամին, ու ցոյց տուեց Գասպարին. — Են ո՞վ է քե՛նք, ետիկնու սակ պառկած:

— Քո բողբ, Գասպարը, — մի քիչ զարմացած՝ պատասխանեց Աստուծոն:

— Գասպարը... չէ՛, նա Գասպարը չէ. նա է՛ս եմ, թումար... տարիներ շուտ եմ տուել եւ հիմա աշխարհ եմ գալիս նորից, Գասպար անունով:

Աստուծոն ոչինչ չհասկացաւ, ու մնաց խօսակցին նայելիս:

— Ես այժմ թումասի պատեանը, դաբուղն եմ, իսկ նա, Գասպարը՝ թումասի հոգին. դաբուղը կը գնայ, իսկ հոգին

կը մնայ,—իբ անմահութեան գիտակցութեամբ զուարթացած՝  
ասաց թումաս-ամին, մի քիչ լռեց ու աւելացրեց.— դրա հա-  
մար էլ ես ասում եմ, որ մահը չկայ. որովհետեւ, երբ մահը  
լինէր, կեանք կը վերջանար:

Առսամը շարունակում էր ուշադրութեամբ ականջ դնել,  
առանց խօսելու. իսկ թումաս-ամին, աւելի շուտ իր մտերին  
պատասխանելով, շարունակեց:

— Հողը չի մեռնում. մարդն էլ չի մեռնում: Արք որ  
հնձում եմք, ասում եմք պրծաւ, չորացաւ մեռաւ... Ահա՛ Մեծ-  
Տափն այժմ մերկ է. արտ չկայ այնտեղ, բայց եկող տարի նա  
դարձեալ կանգուն կը լինի. եւ երբ ո՛չ մի տարի, ոչ մի տեղ  
էլ արտ չի լինի, են վախճը կ'ասենք արք մեռաւ: Դրա պէս  
էլ՝ երբ որ ոչ մի տեղ Գասպար չի լինի, են վախճը կ'ասենք.  
—մահը կայ, թումասը մեռաւ...

Բլուրներից մեկի դօշից բուռեր ձայն հանեց. նրան պա-  
տասխանեց մի ուրիշն, ու երկուսն էլ լռեցին, կարծես փոռմա-  
նելով, որ վարկեանաչափ խանգարեցին գիշերային այդ հան-  
դիսաւոր լուսիւնը: Առսամը շարժուեց:

— Մարդիկ խղմտանք չունին,—ասաց նա.— երբ իմ աւ-  
խասածս ինձ բողբէին, կալից յետոյ կը գնայի «Միւռուղ-Ջրերը»,  
մեջիս ցար կը բժեկէի... ասում են՝ զարմանալի ջուր է. ան-  
յոյս հիւանդը գնում է, սաղ-սալամաք յետ դառնում:

Թումաս-ամուն այնպէս երեւաց, թէ իր վերամբարձ  
տրամադրութեան, իր այդ վարկեանին ապրած հոգեկան աւ-  
խարհի մեջ Առսամը մի անտառ, կոպիտ սեպ խփեց. բայց եւ  
այնպէս՝ հոգին լցւած սիրով դեպի հողն ու երկինքը, եզնե-  
րն ու մարդիկ, խուրձերն ու կալը, մի քիչ լռեց եւ ասաց  
մեղմ ձայնով:

— Առսամ, մարդ ուրիշների խղմտանքին չպէ՛ս է նայի,  
այլ իրա արտին. խղմտանքը մեր ժամի գանգակի պէս ձայն ու-  
նի, որ միշտ մեր արտումը ձայն է տալիս, թէ՛ է՛ս արա, է՛ն  
արա. ով որ լսի, նա բախտաւոր կը լինի, ով չի լսի՝ նա  
Աստուծոն հակառակ է գնում: Գանգատում ես, թէ՛ մեջքս ցա-  
ւում է. կարծում ես թէ նրանք, որ շարունակ խառն ու դու-  
մաշում են ման գալիս, որ մեջքներիցը չեն կռնում, թէ տա-

փից մի չոփ վերցնեն, որ սնդուկներով փող ունին,—նրանց  
մեջքը չի՞ ցաւում. ընդհակառակը՝ այդպիսիների թէ՛ հոգին  
է ցաւում, թէ՛ մեջքը, այն գանգանութեամբ, որ այդ ցաւերն  
աշխատանքից չէ, այլ ուրիշի աշխատանքն ունեւորց. իսկ դա՛  
մեղք է. մե՛ծ մեղք... Ահա՛ իմ գոկասեղս էլ ծակում է. բայց  
ես գիտեմ, թէ ինչո՛ւ համար է ծակում. բանել եմ է՛... արտ  
եմ ցանել, արտ եմ հնձել, կալ եմ բակել... ասումա՞յին  
գործ եմ կատարել եւ այժմ սիրտս ուրախ է, եւ իմ են ֆրսնո-  
ղող ցորենի մի հասիկը չեմ փոխի մի սնդուկ արծաթի հետ:  
Թումաս-ամին մի քիչ շուտ առաւ ու շարունակեց.— երբ  
մարդ նայում, տեսնում է իրա ֆրսնից բեղմնաւորուած ա-  
ղիւնքը, ցաւն էլ է մոռանում, դարդն էլ. դու է՛լ ուրախ  
արտով նայիր քո սեփական աշխատանքի պտղին, մի գանգա-  
տուիր. եւ մեջքիդ ցաւն աչխոյ էլ չի երեւայ:

— Իհարկէ, արածովս ուրախանում եմ,—համաձայնեց  
Առսամը,—բայց մի քիչ չար եմ. անարդար բանը որ տեսնում  
եմ, սիրտս տակնուվրայ է լինում. մեջքիս ծակոցն էլ որ բըռ-  
նում է, ամեն ինչ ընկնում է աչխոյս:

— Կ'անցնի, կ'անցնի... ահա՛ հանգստանալու ժամա-  
նակը գալիս է. ոտներդ մեկնիր ու հեման ֆնիր, որ մեջքիդ  
վրայ մեջք բանի, մինչեւ որ մանր դարձեալ ձեռքդ կ'առնես:

Առսամը ոչինչ չպատասխանեց. գլուխը դրեց խուրձի  
վրայ, ոտները կուչ արեց, աչքերը երկնին գցելով՝ մի քիչ  
մտածեց ու ֆնեց:

Գիշերից բաւական անցել էր:

Գիմացի բլրի ուղղութեամբ, հորիզոնի ծայրում, երկնի  
կապտութիւնը մի քիչ փոխուեց, այնտեղ ինչ-որ խորհրդաւոր  
բան էր կատարուում: Մի քանի բոպէ եւս, եւ ահա՛ նրաւալի  
յլուրեամբ յի երկինքը ժպտաց, եւ կիսալուսինը մի շուրջ  
պերճանքով, կախարհող շեղութեամբ՝ իջաւ ասպարէզ:

Աղօտ, մեղմ լույսն ընդարձակեց թումաս-ամու տեսողու-  
թեան սահմանները, եւ նա վերացած, երեւացած՝ դիտում էր  
չորս կողմը: Լուսնի դուրս գալով՝ բացուել էր բնութեան մի  
առանձին չհնաղ տեսարան: Գիւղից վեր, կոհակաւոր լեռ ու  
բլուրներ իրար թիկունքի բարդուած՝ չգիտես ննճում, թէ համ-

բուռում էին միմեանց. անքիւ էին այդ բլուրները, զարմանալի ձեւերով, բայց բոլորը գեղեցիկ, սքանչելի: Եւ Սիպսակ-Սարի գագաթը բլուրների հանգույցների յետեւից ցցուած դեպի երկինք, ողուլուել էր գիշերային մի դիրքական լուսով... որքան մօտիկ էր երեւում նրանից վերեւ ցոլացող շողուն աստղը. բուռում էր, քէ ձեռնով կարելի է հասնել, դրա համար հատկաւոր էր միայն կանգնել սարի գագաթին:

— Փա՛նք ի պարծումս Ասունձու,— մտնչաց թումասամին, լի երանութեամբ:

Ծանր, ֆրենազան աշխատանքից յետոյ, պէտք է որ նա իսկոյն բուն մտեր, բայց այդ մասին նա չէր մտածում. իր գեղջկական հոգով այդ բոպէին նա ընդգրկած տեղերէր, ձուլուել էր դաշտերի ու լեռների հետ եւ կարծես հասկանում էր նրանց լեզուն, որ այնպէ՛ս փոքր շունչում էր ականջին...



Մի քեքել հով բլուրներից պոկուելով՝ եկաւ, շոյեց թումասամու դիմքն ու սուրաց, անցաւ դեպի հարթավայրը: Ծղրիդների անհամաչափ երգերն աւելի ուժեղացան...

Թումասամին սարօրինակ շարժումով կոքնեց տեղն ու մի բանի ուշադրութեամբ ականջ դնողի նման՝ մնաց փարագած: Նրան բուաց, որ դաշտերը շնչում են, շնչում են լեռնալանջերը. որ նրանք կենդանի են, եւ ինքն զգում է նրանց վիթխարի կրճերի ելեւեջները...

Թումասամին ժպտաց մի անգուգական ժպտով եւ այդ ժպտն էլ շրթունքներին՝ ֆնեց անդորր ֆնով:

Վերելի կողմից մի ձայն, զիլ ու կկլան, բարձրացաւ, ու բաղխուելով ժայռերին, բնդուն արձագաններով սարածուեց մինչեւ կալերն ու մարեց ջինջ օդում: Գիւղում տեղտեղ կրակներ սկսեցին պլպլալ. շների հաջոցները շատացան: Գիւղն արթնանում էր:

Արթնացաւ եւ թումասամին, սիրք հանգիստ ու խաղաղ: Արթնացաւ, նայեց Գասպարին, լիւեց գիշերուայ ունեցած գոյցն ու իր ապումներն, ու դարձեալ ժպտալով՝ պատասխանեց իր «ասուածային գործը» արունակելով:



«Ազգային գրադարան



NL0320976

2 1472

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

Պրինթ' Баку, Контора Армянскаго Человѣколюбиваго  
Общества. Гимназическая ул., соб. д.